Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26. 594

335
L-50

26594

05 JAN 2010

335
L-50

02 MAY 2013

6 № Գրադարան «Կեանք»-ի № 6

300
Ա-Ա-Ա

Ա. ԼԻՊԿՆԵԽՏ

003
11793

ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱՐՀ

ՀՍՍՀ Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Հանրային Библиотека
7/XI 1922
ՄՈՍԿՎԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ռուսերէնից թարգմ.
Հ. Ցով.

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաւարժ տպարան Ընկ. «ՀԱՅՐԱՊԷՍ» Մարաբեան փող. № 5.
1906 (174)

ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ.

Վ. Լիպկնեխտի ճառն է, որ արտասանել է 1871 թ. հոկտեմբերի 22-ին՝ Կրիմմիտշաու քաղաքում հիմնած ժողովրդական միութեան տարեդարձի առթիւ։

Բարեկամներ, գերմանական դեմոկրատիայի աւագ Յովհաննէս Եակոբին իւր մի նշանաւոր «Բանուորական շարժման նպատակների մասին» ճառի մէջ ասել է. «Քաղաքակրթութեան ապագայ պատմաբանի համար ամենասակաւաթիւ բանուորական միութեան կազմակերպութիւնն աւելի մեծ նշանակութիւն կունենայ, քան թէ Սադովայի մօտ տեղի ունեցած կռուի օրը»։ Եթէ նա այս բանն ասէր մի տարի յետոյ, կարող էր աւելացնել նաև՝ «և քան թէ «պարոն պարոն Բոնապարտի և Բիսմարկի սրբազան պատերազմի» բոլոր «փայլուն յաղթանակները» ու գիղեցիկ «հեծելազօրային ճակատամարտները»։

Թէև այս «Կրիմմիտշաուի ժողովրդական միութիւնը», որի հիմնարկութիւնն այսօր մենք տօնում ենք, բանուորական միութիւն անունը չէ կրում, բայց բացառապէս բանուորներից է բաղկացած և հետևում է սոցիալդեմոկրատիայի սկզբունքներին. հէնց այդ պատճառով էլ էութեամբ բանուորական միութիւն է և Եակոբիի խօսքերը վերաբերում են նաև սրան։

Այո, ամենասակաւաթիւ բանուորական միութեան

կազմակերպութիւնն աւելի նշանաւոր քաղաքակրթական գործ է (актъ), քան այն բոլոր «մեծ գործերը», որ կատարել է ռազմական և միապետական Եւրոպան և որ դեռ պէտք է կատարէ, այսպէս կոչուած, պատուի դաշտում. ամենասակաւաթիւ բանուորական միութեան մէջ ապրում և ներգործում են ներկայիս գաղափարները, պատրաստւում են զօրեղ հարցերի լուծումն. հարցեր, որոնք առաջ են տանում մեր ժամանակը, այն ինչ զինուորի ձեռքը շարժում է սպանութեան գործիք հրացանը, որ պահպանէ և պաշտպանէ անցեալի ստեղծագործութիւնները: Իւրաքանչիւր բանուորական միութիւն մարդկային այգու մէջ տնկած մի շիւ է. այն այգու, որն աւերւում է «փառաւոր ու հռչակաւոր զօրքերի ձեռքով»: Այդ միութիւններից ամեն մէկն իսկական կրթութեան մի դպրոց է, որն ազատութիւն է տալիս զինուորական յաղթողների սպառնալիքներին ու վիրաւորանքներին ենթակայ մարդուն: Նա նոր աշխարհի մի կտորն է, որ սկսի նման խլրտում է հին աշխարհի մէջ, որպէս զի նպաստէ նորա քարուքանդ լինելուն—աւերուելուն:

Երկու աշխարհ կանգնած են այժմ դէմ առ դէմ—ունևորների աշխարհ և չունևորների աշխարհ. դրամագլուխի—կապիտալի աշխարհ և աշխատանքի աշխարհ. ճնշողների աշխարհ և ճնշուողների աշխարհ. բուրժուազիայի աշխարհ և սոցիալիզմի աշխարհ—երկու աշխարհ՝ հակասական նպատակներով, ձգտումներով, հայեացքներով և տարբեր լեզուներով—երկու աշխարհ՝ որոնք միասին իրար հանդէպ մնալ չեն կարող և որոնցից մէկը պէտք է տեղի տայ միւսին:

Վերջին պատերազմի ժամանակ՝ կրակէ գնդակների և բոցավառուած քաղաքների ու գիւղերի փայլի

տակ արդէն ամենակարճատես աչքն անգամ կարող էր նկատել այդ երկու աշխարհների սուր ուրուագծերը՝ այստեղ հին աշխարհի ներկայացուցիչներն էին, որոնք առելութիւն և արհամարհանք էին քարոզում դէպի հարեան ժողովուրդը՝ մասնայական մարդասպանութիւնը դնելով որպէս ամենաբարձր մարդկային նպատակ, բորբոքելով կրքերը ամեն տեսակ միջոցներով, խեղդելով միտքը և նեղսիրտ մոլեռանդ հայրենասիրութեան բեմի վրայ զոհելով մարդասիրութիւնը (гуманность),—այնտեղ մի կողմում կանգած էին նոր աշխարհի ներկայացուցիչները, հանգիստ՝ կատաղի հեղեղի հանդէպ. լուրջ՝ ազգային զառանցանքի օրգիաների հանդէպ և անդրդուելի՝ նախատինքների, մեղադրանքների, յարձակումների, հալածանքների հանդէպ, հպարտ դարձնելով իրենց գլուխները դէպի հակառակորդները՝ դիմում էին նրանց հետևեալ բացականչութեամբ.

«Այն, ինչ որ դուք կնքում էք ամենաազնիւ պարտականութիւն անունով, մեզ անբարոյական է թւում, այն ամենը, որ դուք որպէս բարձրագոյն բարիք, գովաբանում էք, հակասում է խելքի—բանականութեան և արդարութեան պահանջներին: Մեր սահմանի սիւների միւս կողմում ապրող մարդն էլ նոյնպիսի մարդ է, ինչպիսին որ մենք ենք. ժողովուրդները—եղբայրներ են և պէտք է սիրեն իրար: Սպանութիւնը սպանութիւն է մնում այն դէպքում ևս, երբ սպանողն ու սպանուողը տարբեր լեզուներով են խօսում և մի գոյն ունեցող հագուստի փոխարէն հագնում են զանազան գոյն հագուստներ: Սպանութիւնը յանցանք է և չի դադարիլ յանցանք լինելուց նաև այն դէպքում, երբ կատարւում է հակայական չափով—մասշտաբով: Յաջողութիւնը երբէք էլ չի կարող անարդարութիւնը ար-

դարութիւն դարձնել։ Այն, ինչ որ դուք փառք էք անուանում, մեզ դրա բացասութիւնն է թւում. ինչ որ դուք պատիւ էք անուանում, մեզ դարձեալ դրա բացասութիւնն է թւում. այն յաղթական հանդէսները, որով դուք պարծենում էք, մեզ համար բարբարոսութեան յաղթականներ են. պատերազմը, լինի այդ նոյնիսկ ամենափառաւոր՝ յանցանք է ընդդէմ մարդկութեան սրբազան հոգու, դժբախտութիւն է թէ յաղթողի և թէ յաղթուողի համար։ Ձեր արտասանած «հայրենիք» բառը մեզ չէ հիացնում—դիւթում. մենք արդէն դէն ենք շպրտել այն հայեացքը, որով դուք էք նայում «հայրենիքի» վերայ. դա մեզ համար յետադիմական (реакціонное) և քաղաքակրթութեանը ՀԱԿԱՍԱԿԱՐ հասկացողութիւն—գաղափար է. մարդկութիւնը չի կարող պարփակուել ազգային շրջանակների մէջ. մեր հայրենիքը—աշխարհն է. «ubi bene, ibi patria»—որտեղ մեզ համար լաւ է, որտեղ կարող ենք մարդ լինել, այդտեղ է մեր հայրենիքը. ձեր հայրենիքը մեզ համար չարչարանքների տեղ է միայն, բանտ է, որսկան շներով շրթայւած — շրջապատւած մի շրջան է, որտեղ մենք ներկայանում ենք հալածուած որսի կենդանիներ և ուր շատերը մեզանից գլուխ դնելու տեղ էլ չունեն։ Հայհոյելով մեզ անուանում էք «հայրենիք չունեցողներ», բայց դուք ինքներդ էք մեզ այդ օրը ձգել։

Եւ ինչպէ՞ս կարող էք դուք, դուք, որ այդպէս հանդիսաւոր հաւատքով խօսում էք ձեր քրիստոնէութեան մասին, յանդիմանել մեզ «ոչ ազգայնական» լինելու համար։ Արդեօք քրիստոնէական կրօնի աչքի ընկնող նշանը չէ՞, որ սա ընդարձակեց հրէաների ազգային Աստուծոյ մասին ունեցած հասկացողութիւնը և դարձրեց համամարդկային Աստուծոյ գաղափար. այսինքն՝ արտայայտելով ժամանակակից ընդունուած ձևով,—խորտակեց ազգայնութեան սկզբունքը. և դուրս ձգելով ազգայնական միտքը՝ նրա տեղ դրեց միջազգայինը։

Ձեր մէջ խօսում է միայն նախապաշարմունքն ու շահամոլութիւնը. մարդկութեան շահը պահանջում է, որ ընկնի, ոչնչանայ այն, որի ներկայացուցիչն էք դուք։ Եւ մարդկութեան շահը յաղթելու է ձեր մասնաւոր շահերը. ձեր յաղթականները միայն արագացնում են ձեր անկումը։ Ձեր յաղթութիւնների առթիւ կատարած տօնի զանգերի հնչիւնների մէջ՝ մենք ձեր մեծութեան յուղարկաւորական քայլերգն ենք լսում»։

Հակառակորդները զարմանքի սրտամաշ զգացումով նայում էին այդ տեսարանին, լսում էին նոր աշխարհի՝ իրենց համար օտար լեզուն, թէև այդ նոր աշխարհը մի աննշան փոքրամասնութիւն էր, որը բողոք էր բարձրացրել յանուն մարդկութեան։ Սակայն ամեն մի ճշմարտութիւն, որ ձգտում է տիրող լինելու, գտնւում է փոքրամասնութեան մէջ. միայն յաղթանակող ճշմարտութիւնն է մեծամասնութեան մէջ։ Ի հարկէ այդ փոքրամասնութիւնը համարեա բացառապէս բանտորներից էր բաղկացած, որոնք ներկայ հասարակութեան մէջ ժառանգութիւնից զրկուածներն են—բայց մի՞թէ ուրիշ կերպ էլ հասկանալի կը լինէր։ Չէ՞ որ ճնշուածներն են միայն, որ միշտ պահում—պաշտպանում են ազատութեան և մարդասիրութեան կրակը—բոցը, քանի որ կարիքն է, որ միշտ էլ ներկայանում է մարդկութեան ամենալաւ և նոյն իսկ միակ ուսուցիչը։ Թոյլին նա սովորեցնում է ազատել, իսկ ուժեղին՝ օգտուել իւր ուժերից, մտածել իւր ազատութեան մասին և գործել յօգուտ այդ ազատու-

թեան։ Ներկայումս բանուորները կարիքից մղուած՝ նուիրել են իրենց ազատագրութեան (эмансипація) գործին,—ինչպէս մէջին դարերում գիւղացիները յայտարարեցին ազատութեան և հաւասարութեան աւետարանը, ինչպէս մեր շրջանի (эра) սկզբներում խեղճերի և թշուառների մէջ առաջ եկաւ քրիստոնէական վարդապետութիւնը։

Առաջին անգամը չէ, որ երկու աշխարհ կանգնած են այդպէս դէմ առ դէմ։ Անցեալ դարում, երբ բուրժուազիան դեռ ևս քաղաքականապէս սարկացած—ճնշուած էր, ստեղծեց իւր մտքերի և հայեացքների առանձին—սեփական աշխարհը, դա խիստ կերպով հակասում էր տիրող—իշխող աշխարհին, որին վերջ ի վերջոյ մտաւորապէս նուաճեց բուրժուազիան. սա մի «բարոյական յաղթանակ էր», որին ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ պէտք է հետևէր նիւթական յաղթանակը։

Բայց պատմութիւնը աւելի յարմար համեմատութիւն է տալիս մեզ. հին հռովմէական աշխարհը իւր զօրութեան գագաթնակէտին էր հասել. էլ տիրելու բան չունէր, քանի որ երկրիս բոլոր՝ պետութիւններն էլ պարտաւոր էին նրան հարկ վճարել։ Հարուստները մինչև կոկորդները խրուած էին անլուր—չլսուած շռայլութեան մէջ, մասսաներն էլ հեծում—չարչարւում էին բթացնող սարկութեան լծի տակ։ Հէնց այդ ժամանակ, այդ ճորտացած, ստորացած ամբոխի խիղճը սկսում է յուզուել-ալեկոծուել ընդդէմ այդպիսի խայտառակ պայմանների և առաջանում է մի շարժում, որն սկզբում իշխողների և հարուստների մէջ ծաղր և արհամարհանք է առաջ բերում, բայց յետոյ ստիպմանարար երկիւղ ներշնչում նրանց. երկիւղ, որը

վերջ ի վերջոյ դրդում է նրանց ամենախիստ և ամենասարսափելի հալածանք սկսել նոր վարդապետութեան հետևողների—կուսակիցների դէմ։ Բայց այդ հալածանքներն ստեղծում են միայն նահատակներ և էլ աւելի ամրացնում այն գաղափարը, որը պէտք է ոչնչացնէին։ Նրանց,—երկիւղ առաջ բերողներին,—«հասարակութեան և պետութեան թշնամիներին» (դրանք քրիստոնէաններն էին), արգելում են միասին հաւաքուել—նրանք էլ հաւաքւում են կատակօմբներում (ստորերկրեայ գերեզմանատներ)։ Նրանց համար գտնում են ամենակատարելագործած չարչարանքներ. մահը շրջապատւում է սարսափի հազարաւոր առարկաներով. ի զուր, մահը չի ներկայանում որպէս խայթոց այդ հալածուողների համար. և ամենանոր հնարած չարչարանքներն անգամ նրանց մէջ առաջ են բերում միայն կարեկցութեան ժպիտ դէպ այն յիմարները, որոնք երևակայում են, թէ այդ միջոցներով կարող են սպանել գաղափարը։ «Եթէ մեր գործը Աստծուց է—Աստուածային է, դուք չէք կարող ոչնչացնել—խեղդել այդ, իսկ եթէ Աստծուց չէ, ինքն իրեն կոչնչանայ առանց ձեզ էլ»։ Այս խօսքերով դիմելով իրենց դահիճներին՝ գնում էին նրանք ուրախ-ուրախ, հաւատացած, որ պիտի յաղթեն, դէպի պատժավայր։ «Եթէ մեր գործն Աստծուց է»—այսինքն, ժամանակակից լեզուով՝ եթէ մեր ձգտումը համապատասխանում է մարդկութեան մտաւոր, բարոյական և նիւթական շահերին, ոչ մի ոյժ չի կարող արմատախիլ անել. իսկ եթէ նա «Աստուծուց չէ», այսինքն՝ եթէ նա հակասում է՝ այդ շահերին, այն ժամանակ պէտք է ոչնչանայ հէնց այդ հակասութեան մէջ՝ առանց բռնի ուժի, ճնշման բռնի միջոցների պահանջ արտայայտելու, որոնք ծայրայեղ

դէպքում կը նշանակեն միայն մեռնող գաղափարին կեանքի մի վերջին նշան ևս։

Եւ ինչ. առիւծներ, օձեր, խաչեր, խարույկներ— և ինչ եղաւ դրանց ներգործութիւնը։ Մարդկային խղճի յեղափոխութիւնը անդադար առաջ էր գնում, քրիստոնէութիւնը յաղթեց ամենակարող կռապաշտութեանը, նոր աշխարհը խորտակեց-ոչնչացրեց հին աշխարհը։ Մի նկատողութիւն. ես հեռու եմ հաւատալու այսպէս կոչուած «սկզբնական քրիստոնէութեան» սովորական աւանդութիւններին, աւելի հեռու եմ ժամանակակից քաղաքակրթութիւնը քրիստոնէութեան հետևանք համարելու։ Վերջին հայեացքը դրականապէս սխալ է և նոյնիսկ բացարձակապէս հակասում է ճշմարտութեան. հեշտութեամբ կարելի է ապացուցել, որ սկսած այն ժամանակից, երբ քրիստոնէութիւնը պետական կրօն դարձաւ, ամեն մի մտաւոր և նիւթական գիւտ կարելի էր անել միայն կռուելով քրիստոնէութեան դէմ, հակառակ քրիստոնէութեան։ Մեզ հասած հին և նոր ժամանակների առասպելները հեքիաթների շրջանին են պատկանում. և չի կարելի բացասել, որ գիտութիւնը և գեղարուեստը, որ ըստ նոր վարդապետութեան (քրիստոնէութեան) հետևողների, անանձատ էին համարւում կռապաշտութիւնից, օտար—անծանօթ էին նրանց և ամենախիստ յարձակման ենթարկուեցին դրանց կողմից։ Ինչ վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ քրիստոնէութիւնը հալածանքի փշեայ պսակն էր կրում, յիմարութիւն կը լինէր, որի մէջ, ճիշտ է, այժմ մեզ մեղադրում են, եթէ մենք բացասէինք, որ քրիստոնէական շարժումը անհրաժեշտաբար ծնունդ առաւ—զարգացաւ այն ժամանակուայ պայմաններից. և որ այդ բարոյականութեան բողոքը,

որը ապրում է մարդկային հաւասարութեան զգացման մէջ, հարկաւոր էր, որպէս դի շեշտակի կերպով խորտակէր փթած, ստրկութեան վերայ հիմնած կռապաշտական համայնքը—հասարակութիւնը և դրանով բաց անէր մարդկութեանը ճանապարհ՝ ապագայ առաջադիմութեան համար։ Ի հարկէ, դասական (классический) կռապաշտութեան անկմանը հետևեց մի երկար ու մութ դիշեր։ Քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալով՝ շեղուեց այն սկզբունքներից, որոնց պարտական էր նա իւր յաղթութեամբ և դարձաւ ճնշման գործիք։ Բայց մարդկութիւնը կանգ չառաւ իւր շարժման մէջ։ Հաւասարութեան, ազատութեան և եղբայրութեան գաղափարները շարունակեցին աճել—մեծանալ հասարակական պայմանների խորքում։ Ի զուր էր պետական եկեղեցին աշխատում շղթաներով կապկպել այդ ձգտումը, իզուր էր նա հաւատաքննութեան (инквизиція) դատարաններ [1]) կազմում։ Նա կարող էր այրել միմիայն մարմինը, բայց յաւիտենական մտքերը ֆենիկսի նման բարձրանում էին մոխրի միջից անվնաս—չվտանգուած թևերով։ Հերետիկոսները հարիւր հազարներով զոհ էին գնում, «անսխալականութեան» դահիճները ոչնչում էին ամենափայլուն «յաղթանակներ ու յաջողութիւններ» —միայն վայրկենական։ Վերջնական հետևանքն այն եղաւ, որ էլի հերետիկոսները յաղթեցին հերետիկոսների դատաւորներին։ Ռեֆորմացիան ոչնչացրեց պապականութեան զօրութիւնը և ներկայումս անսահմանափակ

---

*) Միջին դարերում կաթոլիկ եկեղեցին գաղտնի հոգևոր դատարաններ էր հիմնում, որով կաթոլիկ եկեղեցու դոգմաները չընդունողներին կամ այդ դոգմաներից շեղուածներին որոնում էին և ամենասարսափելի պատիժների ենթարկում։ Ծ. Թ.

—ազատ Պապը ապաւինած է իւր թշնամիների զթասրտութեան և ներկայացնում է կարեկցութեան արժանի մի առարկայ, բայց ոչ երբէք վախի։

Եւ իսկապէս, ով ընդունակ է սովորել ընդհանրապէս, պէտք է հասկացած լինի կրօնական հալածանքների պատմութիւնից, որ անմտութիւն է ձգտել յետ շրջելու առաջադիմութեան անիւը։ Ինչպէս որ միջին դարերում հերետիկոսների դատաւորները նզովքի արժանացան մարդկութեան դատարանի միջոցով, այնպէս էլ ներկայիս հերետիկոսների դատաւորները, ոքոնք համարձակւում են ճնշել սոցիալիզմի նոր վարդապետութիւնը ոստիկանական հալածանքներով, նզովուած կը լինեն մարդկութեան դատարանի առաջ։ Եւ ինչպէս որ միջին դարերի հերետիկոսները վերջ ի վերջոյ յաղթեցին հերետիկոսների դատաւորներին, այդպէս էլ ներկայիս հերետիկոսները կը յաղթեն ներկայիս հերետիկոսների դատաւորներին։ Կամ չլինի՞ մտածում են, թէ մեր դաղափարների մէջ աւելի քիչ կենսական ուժ կայ, քան քրիստոնեական նահատակների դաղափարների մէջ։ Սխալ ենթադրութիւն։

Այն դերն, ինչոր խաղացել է քրիստոնէութիւնը հին հռովմէական աշխարհի անկման նկատմամբ, նոյն այդ դերը խաղում է այժմ սոցիալիզմը բուրժուազական աշխարհի նկատմամբ։ Ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ այժմ խղճի զգացումը դէմ է ելնում կոպիտ նիւթապաշտութեան *), որը զուրկ է ամէն մի իդէալից և ստորացնում է մարդուն—հասցնում նրան անասունի և ապրանքի աստիճանի. այն ժամանակուայ նման էլի միայն խեղճերի ու ժառանգութիւնից զրկուածների մէջ է աճում նոր աշխարհի սերմը. ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ այժմ մեզանում առաջ եկաւ զժտութիւն ազգային նախապաշարումների հետ։ Այնուամենայնիւ կայ մի էական տարբերութիւն. սոցիալիզմին դէմ չէ և ոչ մի գիտութիւն. ընդհակառակը նա ամուր կերպով յենւում է գիտութեան վրայ, թէև գիտութեան խմաստունները մեծ մասամբ ծառայում են մամոնային. սոցիալիզը ոչ միայն զգացմունքի գործ է, այլ և խելքի գործ. նա հիմնւում է գոյութիւն ունեցող հասարակական յարաբերութիւնների պարզ—որոշ գիտակցութեան վրայ և ունի համայնքի ու պետութեան վերաշինութեան—բարենորոգութեան որոշ և իրականացող ծրագիր, կամ աւելի պարզ՝ համայնքի, քանի որ պետութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՞ (շատ կամ քիչ լաւ) կազմակերպուած համայնք։ Որպէս զգացմունքի և խղճի գործ՝ սոցիալիզմը իր մէջ է կրում քրիստոնէութեան ամբողջ ուժը—ուշադրութիւն դարձրէք, ես այստեղ խօսում եմ քրիստոնէութեան զարգացման առաջին շրջանի շարժման մասին.—որպէս խելքի գործ՝ սոցիալիզմը կրում է իր մէջ գիտութեան ամբողջ ուժը։ Բայց եթէ միայն զգացմունքը առաջին քրիստոնէաներին անյաղթելի դարձրեց, ուրեմն որքան անյուսալի է այդ դէպքում սոցիալիզմի դէմ մղած կռիւը, սոցիալիզմի, որին զգացմունքը կրօնի ուժ է տալիս, իսկ խելքը—գիտութեան ուժ։

Եթէ միայն ուղիղ հասկանանք «կրօն» բառը, այն ժամանակ ես կասէի, սոցիալիզմը միեւնոյն ժամանակ ե՛ւ կրօն է, ե՛ւ գիտութիւն։ Սոցիալիզմը չի կարելի ո-

*) Այս նիւթապաշտութիւնը պէտք է դանագանել գիտական նիւթապաշտութիւնից (матеріализмъ), որը ես, ի հարկէ, չեմ բացասում։

չնչացնել ոչ խորամանկութեամբ, ոչ ուժով, ոչ սոփեստական, կեղծ ու պատիր ապացոյցներով, ոչ ոստիկանութեան միջոցով և ոչ էլ ասեղնաւոր հրացանով, որովհետև նա արդեն է բռնել, բուն է դրել բանւորների սրտերի մէջ։ Ամեն մի բանւորի մէջ գիտակցաբար, թէ անգիտակցաբար, շատ թէ քիչ զարգացած է սոցիալիզմի սաղմը և այդ սաղմը—նոր աշխարհի սաղմը—անկարելի է խեղդել։ Եւ ոչ մի բան չի կարող այդ գործին օգնել. կարելի է ստել, փակել աչքերը, ամբաստանել, կոտորել—բոլորն ի զուր, շարժումն առաջ է գնում լնութեան օրէնքի անհրաժեշտութեամբ, իսկ հալածանքները միմիայն ամրացնում են սոցիալիզմը, ինչպէս ամրացրին քրիստոնէութիւնը։ Բանւորներն էլ կարողանում են մեռնել իրենց համոզմունքների համար, ինչպէս մեռնում էին քրիստոնէաները։ Սոցիալիզմն էլ քրիստոնէութեան նման ունի իր նահատակները և եթէ էլի կսպանուեն տասնեակ—հարիւր հազարներ, այդ չի խանգարի սոցիալիզմին վերջ ի վերջոյ յաղթանակ տանելու, ինչպէս և չխանգարեց քրիստոնէութեանը։ Իւրաքանչիւր նահատակի արիւնը կը ծլի հարիւրաւոր նոր նահատակներ. ուժեղացրած վառանգը կ'ամրապնդէ քաջութեան—անվեհերութեան զգացմունքը և ֆրանսիական յեղափոխութեան մի արտայայտութեան համաձայն. «Ով դաշն է կապել ժառուան հետ, յաղթութիւնն էլ նրա կողմը կը լինի»։ «Արիւնը և երկաթը» թող սարսեցնեն վախկոտներին. իսկ մենք ծիծաղել կարող ենք միայն սպառնալիքների և վառանգների վերայ։

Նայենք ֆրանսիային—այդ ահագին և՛ քաղաքական, և՛ սոցիալական փորձառու դաշտին, որտեղ շատ ժամանակ չէ անցել, ինչ խաղացուեց Կոմմունայի այդ

վսեմագոյն-վեհագոյն ողբերգութիւնը։ Սոցիալիստական պրոլետարեատը, որը Փարիզի անցքերի աղմկայոյզ ալիքների վերայով քաղաքական իշխանութեան բարձրութեան էր հասել, կորաւ պրուսական և ֆրանսիական զօրքերի միացեալ ուժի ճնշման տակ. քառասուն հազար բանւորներ սպանուեցան կռուի ժամանակ և կռուից յետոյ. նոյն այդ չափով էլ բանտարկուեցան, որպէս զի վատառողջ բանտերում, նաւերի նեխած պատերի մէջ, շիկացած աւազոտ անապատներում և Նոր-Կալեդոնեայի թունաւոր ճահիճներում զոհուեն «չոր Գիլիոտինին»։ Ո՞րպիսի հրճուանք հին աշխարհի ներկայացուցիչների համար։ Սոցիալական հարցն այրուեցաւ, չքուեց աշխարհից, սոցիալիզմը յանձին 80,000 սոցիալիստների՝ մահուան ենթարկուեց, սպանուեց։

Սոցիալիզմն սպանուեց. այդ պարոնները վատ յիշողութիւն ունին. այդ ահռելի դէպքից (катастрофа) քսան երեք տարի առաջ Փարիզը ներկայացնում էր նոյն այդպիսի ողբերգութեան մի հրապարակ, ոչ այսպիսի մեծ չափով, բայց և ոչ պակաս վսեմ։ Ֆրանսիական փեsրուարեան յեղափոխութիւնը յայտնի է ձեզ ընդհանուր գծերով։ Փարիզեան պրոլետարիատը վայր գլորեց յունիսեան գահը։ Նա լուրջ համարեց ազատաժիտ բուրժուազիայի այն յուզումից առաջացած ֆրազաները, որով նրանք բուրժուազական թագաւորութիւնը փչացած էին յայտարարում, և չարիքի հէնց արմատին խփեց։ Բայց յեղափոխութիւնը նրա համար լոկ ֆրազայ՞ չէր. նա չէր ուզում ոչնչացնել մի ձևի շահագործութիւնը և քաղցածութիւնը, որպէս զի մի ուրիշ ձևի տակ նորից նրանց գահ բարձրացնէ։

Հաստատուեցաւ ժամանակաւոր կառավարու-

թիւն, որը բաղկացած էր «կարգին—խելքը գլխին» հասարակապետականներից և սոցիալիզմի մի քանի ներկայացուցիչներից: Բանւորները, որ աւելի դիւրահաւատ և մեծահոգի էին, քան խելօք, յայտարարեցին կառավարութեանը. «Մենք գիտենք, որ մեծամասնութիւնը ձեզնից չի համակրում մեր ձգտումներին. բայց մենք, որքան կարելի է, ցանկանում ենք խուսափել ապագայ արիւնհեղութիւնից:—Մենք համաձայն ենք երեք ամիս բռուառուրիւն կրել. երեք ամիս մենք կը տանենք զրկանքներ. այդ երեք ամիսը մենք տալիս ենք ձեզ փորձի համար: Եթէ այդ ժամանակամիջոցն անցնելուց յետոյ տեսանք, որ ազնիւ էք, որ ուզում էք մի բան անել քաղցած պրօլետարիատի համար, լաւ, սոցիալական հարցն այդ դէպքում խաղաղ ճանապարհով լուծումն կստանայ: Բայց եթէ տեսնենք, որ մենք նորից խաբուած ենք, այն ժամանակ արդէն մենք ինքներս պէտք է մեզ օգնենք»: Կառավարութիւնն ամեն ինչ խոստացաւ և ամեն բանում էլ խաբեց: Ազգային արհեստանոցները, որոնց մեր անյայտ ժամուլը սոցիալիզմի ստեղծագործութիւն էր համարում, կազմուեցան այն նպատակով, որ կարողանան մի բանւորական բանակ առաջ բերել սոցիալիզմի դեմ, սա մի փորձ էր, որ ջախջախուեց՝ ընդհարուելով Ֆրանսիացի բանւորի կենդանի վառ դասակարգային գիտակցութեան հետ: Պրօլետարիատին կարելի չեղաւ քթից բռնած տանել—խաբել. հարկ համարուեց բնաջինջ անել նրան գնդակաձիկներով (картечь):

Չեռք առնուեցան անհրաժեշտ միջոցներ. և երբ բուրժուազիան (որ իշխում էր ժամանակաւոր կառավարութեան մէջ և այդ ժամանակ կանչուած ազգային ժողովում) հաւատացած էր, որ յաղթանակը տարել է,

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* С.С.Р.А. Общая Библиотека
7/XI. 1922
ՄԱՍՆԱԿ
ՄԱՍՆԱԿ

դուրս ձգեց ազգային արհեստանոցներից դէպի փողոց 30,000 բանւոր և սարսափեց նրանց սոսկալի լինել, կամ կռուել: Ճիշտ այդ ժամանակ «սարսափելի պայմանագրի» ժամանակը, որ կապուած էր մարտի 18-ին: Յունիսի 21-ին և 22-ին պրօլետարիատը կռուի պատրաստութիւն տեսաւ, հետևեալ օրն էլ կռիւը բռնկուեց: Իմ խնդրի մէջ չէ մանում բանալ ձեր առաջ յունիսեան ապստամբութեան մանրամասնութեանց պատկերը: Բաւական է յիշել, որ չորս օրուան հերոսական կռուից յետոյ 40,000 բանւոր ընկան զօրքի հարուածների տակ, զօրքի, որը բաղկացած էր 80,000 կանոնաւոր զինուորներից և 40,000 ազգային ընտիր զօրքից—գվարդիայից ու մոբիլից *): Ամենասարսափելի խստութիւններ կատարեցին յաղթողները.—հազարներով գերիներ սպանուեցան. կռուում ընկած և յետոյ սպանուած բանւորների թիւը մօտ 12,000 են հաշուում, և համարեա այդքան էլ գերիներ, որոնց վախեցան միանգամից սպանել, ուստի ուղարկեցին Լամբեսսա և Կայեննա, ուր մեծամասնութիւնը զոհ գնաց կլիմային և յաղթողների սոսկալի վերաբերմունքին:

Անասելի հրճուանքը շշմեցրեց բուրժուազիային յունիսեան մարտիկների պարտութեան առթիւ. սոցիալիզմը ոչնչացրած էր. «հասարակութիւնն ազատուած». դրա հետ միասին ազատուած էին նաև այն բոլոր բաները, ինչպէս նրա—հասարակութեան հետ կապ ունէր. ազատուած էր «ընտանիքը», սեփականութիւնը» և Աստուած գիտէ, թէ էլ որքան գեղեցիկ բաներ, որոնց

*) Ֆրանսիայի ազգային շարժական գվարդիան, որը 1868 թ. օրէնքի հիման վերայ բաղկացած էր այն բոլոր 20—40 տարեկան տղամարդկանցից, որոնք ընդունակ էին զէնք կրելու, բայց զօրքի կազմի մէջ չէին մտած: Ծ. Թ.

աստուածացնում է բուրժուազիան խօսքերով, իսկ իրօք ոտի տակ տալիս և սղծում։

Սօցիալիզմն սպանուած էր։ Տասներկու հազար «աւազակներ», «մարդասպաններ — հրդեհածիգներ», «ժամանակակից բարբարոսներ»—ես չեմ կարող թուել այն բոլոր հայհոյանքները, որ գործ էին ածւում այն ժամանակ. կարդացէք մեր ժամուլի ֆրանսիական Կոմմունայի վերաբերեալ յօդուածները և կը գտնէք հայհոյանքների ամբողջ շարքը. բուրժուազիայի լրագրական ծառաները չէին դժուարանում նոր հայհոյանքներ ստեղծել—տասներկու հազար սօցիալիստներ սպանուած, տասներկու հազար էլ «չոր գիլիոտինի» ճանապարհին էին—էլ ո՞վ կարող էր այն ժամանակ որ և է վտանգ սպասել ապագայում։ Սօցիալիզմը մեռել և թաղուել էր. նրա դիակը ամուր կերպով-խորը հողի մէջ էին թաղել-կարող էր արդեօք սօցիալիզմը նորից յարութիւն առնել։ Ժամանակն առաջ էր գնում. հասարակապետութիւնն էլ պէտք է շուտով զերեզման իջնէր և պարկէը սօցիալիզմի կողքին։ Եւ Նապալէօնը այդ զերեզմանի վրայ բարձրացրեց իւր գահը. կարող էր նորից յարութիւն առնել մեռած սօցիալիզմը։ Իշխում էին «արիւնը և երկաթը». մամուլը ստրկացրած էր և կամ կաշառուած. ամեն ինչ գործ էր դրւում միայն այն նպատակով, որ բանուորներին կայսրութեան կողմը թեքէին-կողմնակից դարձնէին. բազմութեան-մասսայի զգացմունքները թունաւորւում էր. կազմակերպուեց գաղտնի և յայտնի ոստիկանութիւն չտեսնուած-չեղած չափով և դարձաւ պետական բարձրագոյն հիմնարկութիւն։ Զօրքը դարձաւ, ինչպէս այժմ—ժամանակակից պետութեան մէջ ունեցած նրա իսկական նշանակութիւնն է, Պրետորիանների գվարդիայ, որոց *) վարժեցրել

էին ժողովրդի դէմ, ինչպէս բուլդոգին (շուն) վարժեցնում են մարդու վերայ յարձակուելու, մի խօսքով յետադիմական (реакціонный) պետութեան արհեստի բոլոր միջոցները գործ էին դրւում, որ նոր բռնկման առաջն առնեն։ Բոնապարտի արածից աւելին՝ ոչ մի կառավարութիւն չէր կարող անել. և ես չեմ կարծում, որ կը լինի մի երկրորդ կառավարութիւն, որ կարողանայ Բոնապարտի արածի չափ անել։ Այն, ինչ որ այժմ անում են այդ ուղղութեամբ Բիսմարկն ու Շտիբերը, միայն նմանութիւն է կայսերութեանը. զարմանալի չէ, որ Բոնապարտը բուրժուազիայի կուռքը դարձաւ, այն էլ ոչ միայն ֆրանսիական բուրժուազիայի, ոչ, այլ ամբողջ երկրների բուրժուազիայի, առանձնապէս գերմանական բուրժուազիայի։ Իւրաքանչիւրը ձեզնից, բարեկամներս, յիշում է, թէ ինչպէս մի քանի տարի առաջ մեր ազատամիտամուլը՝ կլոդդերադաչը, ժողովրդական թերթը, Ազգային թերթը—և որքան աւելի ազատամիտ, այնքան աւելի ջերմեռանդ—բիւզանդական եղանակով խոնարհւում էին զեկտեմբերի 2-ի մարդի առաջ։ Նա—այդ մարդը երևացաւ որպէս նախախնամութիւն մարդկային պատկերի մէջ՝ ամեն իմաստութեան և ամենակարողութեան աստուածային յատկանիշներով։ Եւ ինչով վերջացաւ այս բոլորը։

Քսան երկու տարի հսկան, որ մեռած էր համարւում, պարկել էր հողի տակ. բայց ահա նա սկսեց ուղղել իւր անդամները և 1870 թ. սեպտեմբերի 4-ին կանգնեց և դուրս եկաւ իւր գերեզմանից — Բօնապարտի գահն ընկաւ եւ սօցիալիզմը յարութիւն առաւ։

Կէս տարի անցնելուց յետոյ՝ կազմուեց Փարիզեան Կոմմունան։ Սօցիալիզմը, որ 1848 թ. միայն չորս օր

*) Հրովմայեցոց կայսրների թիկնապահ զօրք.

կարողացաւ կռուի դիմանալ, այս անգամ երկու ամսից աւել ընդիմադրեց Ֆրանսիական զինուորական կարգերի միացեալ ուժերին, որին աջակցում էին պրուսացիները. և նրան—սոցիալիզմին յաղթել կարողացան միայն ութնօրեայ փողոցային կռուից յետոյ: Կոտորած աւելի եղաւ այս անգամ, քան 1848 թ. և աքսորականների թիւն էլ կրկնապատկուեց: Ֆրանսիական բուրժուազիան վճռեց այս անգամ հիմնաւոր կերպով մաքրել-սրբել և միւս մնացած պետութիւնների բուրժուազիան էլ հիացմամբ ծափահարեց սրան—Ֆրանսիական բուրժուազիային.

Բայց այժմ, երբ չորս ամիս հազիւ լինի անցած, բուրժուազիան սկսում է գիտակցել, որ իւր յաղթութիւնը—Պիերրոսի յաղթութիւնն է, որ ինքը դանակով խփել է իւր սեփական մարմնին: Նա այնպէս մաքրեց, որ իւր արհեստանոցներն ու գործարանները զուրկ մնացին հարկաւոր թւով բանուորներից: Սակայն սոցիալիզմն սպանուած չէ. նա ապրում է Փարիզում, Ֆրանսիայում, Գերմանիայում և բոլոր քաղաքակիրթ երկրներում—նա ապրում է իւրաքանչիւր բանուորի կրծքում, որի սիրտն ընդունակ է զգալու, զլուխը՝ մտածելու: Չէ՞ որ չի կարող բուրժուազիան սպանել բոլոր բանուորներին. և նոյն իսկ եթէ այս բանը նրան յաջողուի, ինչ հետևանքի կը հասնի: Նա դրանով ինքնասպանութիւն գործած կը լինի: Բուրժուազիան գոյութիւն ունի շնորհիւ բանուորների. առանց բանուորների նա կը դադարի գոյութիւն ունենալուց և բանուորների միջոցով էլ կը կորչի—նա չի կարող այս անողոք դիլեմմայից (առեղծուած-դժուար հանելուկ) զուրս գալ: Բուրժուազիայի զարգացումը պահանջում է պրոլետարիատի աճող բազմութիւն. բայց անտեսական յարաբերութիւնները ձգում են պրոլետարիատին սոցիալիզմի գիրկը: Որքան մեծանում է բուրժուազիայի իշխանութիւնը, այնքան աւելի են աճում պրոլետարիատի խմբերը, այնքան աւելի ուժեղանում սոցիալիստական շարժումը, այնքան աւելի զօրեղանում բուրժուազիայի հակառակորդները: Եթէ բուրժուազիան ցանկանում է բուրժուազիայ էլ մնալ, պէտք է ամբացնէ պրոլետարիատը, նրա հետ միասին էլ սոցիալիզմը, որը և նրան—բուրժուազիային պէտք է ոչնչացնէ: Եթէ նա կռուում է պրոլետարիատի և սոցիալիզմի դէմ, ուրեմն դրանով խորտակում է իւր սեփական իշխանութեան հիմքը, իւր գոյութեան հիմքը: Այս «կախարդուած շրջանի» մէջ նա պէտք է ոչնչանայ: «Արիւնը և երկաթը» անկարող են սոցիալիստական շարժման հոգին հանել: 1848 թ. յունիս ամսում մի անյաջող փորձ կատարուեց. և 1871 թ. Փարիզեան արիւնոտ ապատութիւնը մեծ յաջողութիւն չունեցաւ: Ինչպէս յունիսեան ապստամբութիւնը ուժեց իւր յարութիւնը կոմմունայով, այդպէս էլ ինքը կոմմունան ապագայում պէտք է ուժեղ իւր յարութիւնը. աւելի մեծ ուժով կը կրկնուեն բռնկումները, մինչև որ հին աշխարհը վերջացնի իւր բոլոր փրկարար միջոցները և խորտակուի.—կամ կարելի է այդ բոլորը վերջանայ խաղաղ ճանապարհով:

Կոպիտ ուժն անկարող է խեղդել սոցիալիզմը: Ով տոգորուած է իւր իրաւունքի գիտակցութեամբ, նա երկիւղ չունի: Թող մեզ բանտարկեն, թող սպանեն մեզ—մեր գործը դրանից չի վնասուի: Այն անյաղթելի հոգին, որն օգնեց հին քրիստոնեաներին ժպիտով տանել նահատակութիւն, ոգևորում է և սոցիալդեմոկրատներին: Մենք առաջ ենք գնում այն ճանապարհով, որով ստիպում է մեզ գնալ մեր համոզմունքը. և եթէ նոյն

իսկ այդ ճանապարհը ծածկուած է դիակներով, մենք առաջ ենք շարժւում դէպ տուող զօրասիւների նման, որի շարքերը նուազում են թշնամիների գնդակներից —յառաջ, մինչև հասնենք նպատակներիս։

Միայն ուժի միջոցով ոչինչ չենք կարող անել սոցիալդեմոկրատիային. այս բանը լաւ են իմանում և մեր թշնամիները. նրանք ուզում են—մտածում են յաղթել «մտաւոր» հրացանով։ Նրանք ստեղծում են բանուորական միութիւններ, ուր ներշնչում են բանուորին, թէ կապիտալի (դրամագլուխ) և աշխատանքի մէջ կատարեալ «ներդաշնակութիւն» կայ. բանուորի իսկական շահն է, որ նա աշխատանք տուողի հետ ձեռք ձեռքի տուած առաջ գնայ. և որ սոցիալական հարցի կռուախնձոր ձգողն այդ երկու դասակարգերի մէջ փառասէր, անբարեխիղճ և կամ պարզ՝ խելացնոր մարդկանց մի խմբակ է։

Թող մեր հակառակորդները շարունակեն հիմնել բանուորական միութիւններ. նրանք հիմնում են այդ մեզ համար։ Ներդաշնակութեան ուսման ամբողջ կեղծիքը բաւական զգալի կերպով ապացուցում է բանուորին ամենօրեայ փորձը. և եթէ բանուորը բուրժուազական մամուլի ազդեցութեան տակ առանձնապէս դէմ է կանգնած սոցիալդեմոկրատիային, պարզ ասեմ, նա շուտով դասակարգային հակասութեան հոտը կ՚առնի և նրա ամբողջ էութիւնը կը գրաւուի սոցիալական կռուով և փորձը կը սովորեցնի նրան հասկանալ, որ ներկայ կապիտալիստական արդիւնաբերութեան շրջանում բանուորի և աշխատանք տուողի շահերը ուղիղ հակասական են միմիանց. հերիք է միայն ցոյց տալ, որ բանուորի շահը կայանում է նրանում, որ որքան կարելի է աւելի շատ աշխատավարձ պահանջի, աշխատանք տուողի շահը նրանում՝ որ ձգտի որքան կարելի է իջեցնել այդ աշխատավարձը։ Այդ երկու դասակարգերի միայն հէնց այս անհամաձայնութեան մէջ, էլ չեմ խօսում ընդհանրապէս քաղաքական և սոցիալական դրութեան մասին, արդէն գտնւում է անվերջ ու անդադար ընդհարումների և վէճերի աղբիւրը, մի խօսքով դասակարգային կռիւը շատ կամ քիչ սուր ձևով։ Եւ այսպէս վերջին ժամանակներում էլ մենք պէտք է տանէինք պատմութեան տարօրինակ ծաղրը, որը կայանում է նրանում, որ ամենախիստ և ամենաերկար գործադուլները,—իսկ գործադուլն՝ այսինքն աշխատանքի դադարեցնելը փողոցային կռուից յետոյ դասակարգային կռուի ամենաուժեղ ձևն է. որ ամենամեծ և ամենահաստատ գործադուլները Գերմանիայում, Վալդենբուրգում, Ֆօրստում և այլն, ծագեցին այն բանուորներից, որոնք Գիրշ-Դունկերի արհեստանոցներում ուսումնասիրել էին ներդաշնակութեան բայց որոց համար այդ բարեպաշտ մտքի ձևի տեսական կողմը՝ շնորհիւ աշխատանք տուողների գործնական վերաբերմունքի՝ փոխուեց, այրող օձի թոյն դարձաւ։ Այս դէպքում պէտք է նկատել, որ վերջին ժամանակներիս ամենածայրայեղ «բանուորական էկսցեսսը» պրուսական պետական հանքերում, (Ֆենիքսգիլտտում) տեղի ունեցաւ, ուր չէր թափանցել սոցիալական թոյնի և ոչ մի հիւլէ։

Ես կարծում եմ, որ այս էլ հերիք է պարզ կերպով նկատելու, թէ որքան անհեթեթ է հաստատելն, իբր թէ սոցիալական շարժումը առանձին անհատների սարքած բան է։ Սակայն մի քիչ խորը նայենք այս հարցին։ Հակառակորդների ասելով՝ կը նշանակի, որ մի քանի մարդիկ են եղել շարժման սկզբնապատճառները. այն շարժման, որը միաձայակ կերպով բռնկուել է բո-

լոր քաղաքակիրթ երկրներում և համարեա մի ամբողջ սերունդ է ինչ որոշում է—տնօրինում է Եւրոպայի վիճակը և առանց որին, ի միջի այլոց, մենք չենք կարող երկրորդ կայսրութիւն երևակայել, և առանց որի դարձեալ անմիտ կը լինէր Բիսմարկի ամբողջ տէր ու տիրականութեան գործը։ Ոչքան վիրաւորանք կայ այդ ենթադրութեան մէջ բանուորների համար։ Հարիւր հազարաւոր, միլլիոնաւոր բանուորներ թոյլ տալ կարողացան, որ նրանց գլուխներն անէր մարդկանց մի խմբակ, որի յետևից վազէին նրանք առանց յետնայելու, ինչպէս ոչխարների հօտը վազում է իրեն առաջընթաց ոչխարների յետևից։

Օ, դուք պարոն բուրժուաներ և պարոն յետադէմականներ (реакціонеръ). եթէ որ բանուորները լինէին այդպէս ոչ ինքնորոյն ու անկախ, ինչպէս դուք էք ենթադրում, կամ ցոյց էք տալիս թէ ենթադրում էք, նրանք արդէն թրպրտալիս կը լինէին ձեր ուռկաններում. չէ՞ որ դուք ամեն միջոց գործ էք դնում միմիայն նրանց բռնելու և դուք, ճիշտ որ, հազար անգամ աւելի շատ միջոցներ ունիք բանուորների վերայ բարոյական և նիւթական ազդեցութիւն գործելու, քան սոցիալդեմոկրատները։ Բացի այդ մեր կուսակցութեան էական նշանն է սկզբունքային կռիւ մղել որ և է հեղինակութեան հաւատալու դէմ և վճռական կերպով բացասել ամեն մի անհատական առաջնորդութիւն։ Բայց ձեր այդ ենթադրութիւնը ոչ միայն վիրաւորական է բանուորների համար, ոչ միայն ճիշտ չէ այս դէպքում, այլ նոյն իսկ ինքն ըստ ինքեան կատարելապէս ո՛չ գիտական. այդ ենթադրութիւնը արտայայտութիւն է մի հայեացքի, որը հիմնուած է զարգացման պատմական

ընթացքի (процессъ), կատարեալ անտեղեակութեան վերայ։

Երեխան շնորհիւ իւր վառ երևակայութեան և անպարզացած խելքի, լցնում է աշխարհը իշխանազուններով, հսկաներով ու կախարդներով։ Ամեն տեղ նա ենթադրում է ինչ որ գերբնական անսովոր բաներ. նրան թւում է, թէ ամեն տեղ էլ իշխում են գաղտնի ուժեր։ Այդպիսի մանկական, կամ աւելի լաւ է ասենք, երեխայական տեսակէտ ունեն և նոքա, որոնք մարդկութեան պատմութեան վերայ նայում են, որպէս արդիւնք մի քանի՝ ընդհանուրի շարքից դուրս — աչքի ընկնող չար կամ բարի մարդկանց. և իւրաքանչիւր անցքի, եղելութեան, շարժման մէջ ենթադրում են այս կամ այն անհատի քմահաճոյքը, ինքնակամութիւնը. և այդ անհատներին ամեն տեսակ գերբնական յատկութիւններ են վերագրում, որպէս զի նրանք համապատասխան լինեն այն դերին, որը իրենք են նրանց վզին փաթաթում։ Այս տեսակէտով է առաջնորդուել մեր նորագոյն ժամանակի պատմագրութիւնը. նա ներկայացնում էր, և դեռ, ցաւելով պէտք է ասել, ներկայացնում է մեծամասնութեանը, որոց անմատչելի են գիտութեան նոր արտադրութիւնները, նշանաւոր իշխանների, զօրավարների և ուրիշ հերոսների *) անունների մի երկար շարք, խառնելով դրա հետ պատերազմների, ժամացու սարսափների, դաւադրութիւնների պատմութիւններ.—մի խօսքով ստոր տեսակի տպաւորիչ (сенсаціонный) վէպ, կիսով չափ ասպետների և աւազակների պատմութիւն, կիսով չափ էլ ժանկական հեքիաթներ։ Գիտական պատմութիւնը (պէտք է զանազա-

*) Այս անունն այստեղ գործ եմ ածում բառի ընդարձակ նշանակութեամբ—Կարլայլի ձեւով։

ցել, ի հարկէ ռուսականից), որ վաղուց չէ ինչ առաջ է եկել, և որի գլխաւոր ներկայացուցիչն է անգլիացի Բօկլը, նայում է մարդկային զարգացման վերայ որպէս անհրաժեշտ հետևանք բնութեան և մարդու յարաբերութեան։ Նա, ինչպէս ընդհանրապէս գիտութիւնը, չի ընդունում ոչ քմահաճոյք, այլ միայն անհրաժեշտութիւն, ոչ կամայականութիւն, այլ պիսպիսութիւն-փոփոխութիւն, ոչ գերբնականութիւն և անսովոր բաներ, այլ միայն բնական և այն բոլոր բաներն, ինչ որ ընդհանուր օրէնքների հետևանք է ներկայանում։ Հնաձև կամ պատմական հեքիաթների գերբնական պատկերները ոչնչանում են քննադատութեան առաջ, ինչպէս որ սարսափելի, մութ տեսիլները չքանում են առաւօտեան արեգակի ճառագայթների առջև. հերոսների պաշտամունքը դուրս է ձգւում մնոտիապաշտութեան տականքների մէջ,—«մեծ մարդիկ» կը ցածրանան, իսկ մարդկութիւնը կը բարձրանայ։

Պատմութեան ընթացքը ներկայացնում է մարդու յաւիտենական կռիւը բնութեան հետ, անընդհատ զոյութեան կռիւ—կռիւ սկզբում բնութիւնից չյաղթուելու համար և կռիւ յետոյ՝ նրան յաղթելու համար։ Այս հազարամեայ կռուի արդիւնքն է մեր ժամանակակից քաղաքակրթութիւնը։

Բարեկամներ, ձեզ բոլորիդ էլ անշուշտ յայտնի է, որ աստուածաշնչի ստեղծագործութեան պատմութիւնը հերքել է գիտութիւնը։ Մարդը իբրև կատարեալ դուրս չեկաւ ստեղծողի ձեռքի տակից և յետոյ աստիճանաբար այնքան այլասերուեց, որ Աստուած հարկ համարեց «իւր պատկերով ու նմանութեամբ ստեղծուած» էակներին կատարեալ կորստից ազատելու համար՝ ուղարկել մարգարէներ, փրկիչներ և ուրիշ նման

գերբնական էակներ. բացի այդ էլ մարդկութիւնը միայն հինգ կամ վեց հազար տարի չէ, որ գոյութիւն ունի։ Երկրաբանական յետախուզութիւնները ճիշտ կերպով ցոյց են տուել, որ երկիրը իւր այդ կարծր դրութեամբ—նիւթի, որից կազմուած է երկիրը, տարիքի մասին մենք ոչինչ ասել չենք կարող, որովհետև նիւթը ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ,—միլլիոնաւոր տարիներ է, ինչ գոյութիւն ունի. իսկ մարդն այնպէս, ինչպէս այժմ ենք տեսնում, մօտաւորապէս նոյն տեսքով, հազարաւոր տարիներ է, ինչ գոյութիւն ունի։

Միլլիարդ տարիներ առաջ դեռ ևս, մամոնտի (կենդանի) ժամանակ, մարդը հասել էր, որքան կարող ենք դատել գտնուած քարէ գործիքների հիման վերայ, այնպիսի քաղաքակրթութեան, որը նրան կենդանուց մի քիչ բարձր է դասում և ստիպում է մեզ ենթադրել, որ նրանից առաջ անհամար սերունդներ են աշխատել։ Ներկայ ժամանակի արագ ընթացքի հիման վերայ չը-պէտք է դատենք նախնական—սկզբնական ժամանակի առաջադիմութեան (прогрессъ) մասին։ Այժմ, երբ մենք կանգնած ենք բոլոր նախորդ սերունդների ու սերի վերայ և վայելում ենք նրանց հաւաքած քաղաքակրթական աշխատանքը, առաջադիմութեան գործոնները (факторъ) սաստիկ բարձրացել—առաջ են գնացել, այն ինչ սկզբնական ժամանակի ամենաանշան առաջադիմութիւնը հազար տարիների գործ էր. և այս կարելի է եզրակացնել այն հանգամանքից, որ բաւական միմիանցից հեռու ժամանակաշրջանների պատկանող բազմատեսակ գործիքները շատ քիչ զանազանութիւն են ներկայացնում։ Սկզբնական մարդն այն սիգաճեմ, հպարտութեամբ դէպ՝ երկինք նայող էակը չէ, որի ճակատին ստեղծուածների տէր լինելու իրաւունքն է

գծագրած, ինչպէս որ նրան նկարագրում է հին-կատակարանի առասպելը։ Նրա ծննդաբանութիւնը վճռականապէս դնում է նրան կենդանիների շարքը. ինչպէս կենդանիներն, այնպէս էլ մարդը անցել են զարգացման բոլոր շրջաններով, սկսած հասարակ խորշից-վանդակիկից. բայց շնորհիւ բարեյաջող հանգամանքների, մարդուն յաջողուել է գերազանցել իւր ցեղակիցներին։ Թէ որքան ահագին ժամանակամիջոց է անցել, մինչև որ մարդը պատմական դարն է թևակոխել, կարելի է միայն գուշակել, բայց ոչ երբէք հաշուել։ Յամենայն դէպս պատմական ժամանակաշրջանը մի աննշան ժամանակամիջոց է՝ համեմատած նախապատմականի հետ, այսինքն այն խաւար ժամանակաշրջանի հետ, երբ մարդն ընդունակ չէր իւր գոյութեան համար ցուշարձան կանգնելու։ Պատմական դարն սկսում է ծաղկել այն վայրկեանից, երբ մարդն ընդունակութիւն է ցոյց տալիս ընկերութիւններ—համայնքներ հիմնելու։ Մինչև դեռ մարդն ապրում էր միայն ինքն իրեն համար, կամ շատ—շատ թափառական ցեղերի զարգացման էր հասած, ինչպէս պատահում է նոյնը բոլոր կենդանիների մէջ, մինչև այդ ժամանակ և ոչ մի պատմութեան մասին էլ խօսք լինել չէր կարող։ Նրա պատմութիւնն սկսում է այն վայրկեանից, երբ նա դառնում է «հասարակական—քաղաքական կենդանի» (Zoôn politikan)։ Առանձին վերցրած՝ նա չէր կարող բարձրանալ—առաջ գնալ կենդանուց. միայն հասարակութեան մէջ, իրեն հաւասարների ընկերակցութեամբ յաջողեցրեց հասնել այդ բանին։ Միայն հասարակութեան շնորհիւ է մարդը մարդ դառնում։ Ամբողջ առաջադիմութիւնը, ամբողջ քաղաքակրթութիւնը՝ հասարակական գործ է. և որքան ընդարձակ է հասարակական շրջանն, այնքան աւելի

արագընթաց է առաջադիմութիւնը, այնքան աւելի բեղմնաւոր է քաղաքակրթութիւնը։ Սկսելով զատ-զատ անհատներից՝ ընդարձակուել—դառնալ ցեղ, ազգ և վերջի վերջոյ համաշխարհային քաղաքացի—ահաւասիկ մարդկային զարգացման ընթացքը։

Միայն հասարակութեան մէջ է նոյնպէս բարոյականութեան սաղմը։ Մարդը պէտք է հասկանայ, որ իրեն համար աւելի օգտակար է ընկերանալ—միանալ իւրեն հաւասարների հետ, քան կռուել նրանց հետ՝ հետևաբար մօտիկների հետ, քան կռուել նրանց հետ՝ հեռաւոր ապրել մշտական վանդի և երկիւղի մէջ։ Ամենաբարձր բարոյականութեան հիմնական կէտը՝ արա քո մերձաւորին այն, ինչ որ ցանկանում ես, որ նա քեզ անէ՝ արդիւնք է այն կարիքի, որը ծնել է մարդկանց մէջ նրանց հասարաշխ շահերի գիտակցութիւնը։ Ի հարկէ այդ համերաշխութիւնը կարող էր վերաբերուել սկզբում մօտիկ մարդկանց շատ նեղ շրջանի և ընդարձակուում մինչև մարդկանց շատ նեղ շրջանի և ընդարձակուել է ասպիճանաբար երկար, ծանր փորձերի դըպրոցում մինչև որ վերջապէս այժմ մենք հասել ենք այն բանին, որ հասարաշխութեան վերջին արգելքները պահուում են միայն նիզակների ուժով։ Համամարդկային հասարաշխութեան գաղափարը՝ քաղաքակրթութեան և բարոյականութեան ամենաբարձր գաղափարն է, և սոցիալիզմի խնդիրն էլ այն է, որ կատարելապէս իրականացնէ այդ։

Եւ այսպէս քաղաքակրթութիւնը հասարակական գործ է։ Երբ և իցէ ապրած իւրաքանչիւր մարդ պէտք է գոյութեան կռիւ մղած լինի և այդ կռուով նա օժանդակել է մարդուն իշխող լինելու միւս կենդանիների և բնութեան վերայ։ Իւրաքանչիւրն առանձին իւր բաժինն է ձգում քաղաքակրթութեան հաւաքած վաստակի գումարի մէջ։ Եւ «մեծ մարդիկ», որոց մասին պատ-

մում է պատմական առասպելը, եթէ իրօք գոյութիւն են ունեցել, նոյնպէս ձգել են իրենց բաժինը—քաջալերուած հանգամանքներից, բայց կարելի է մի քիչ աւելի շատ, քան նրանց անյայտ եղբայրակիցները.—յաւենայն դէպս այդ բանին նոյնպէս օգնել է միմիայն ճասարակութիւնը: Մինչդեռ պատմական առասպելը գնահատում է ժողովուրդները մի քանի մեծ մարդկանց անսովոր գործերով, քննադատական պատմութիւնն, ընդհակառակը, այդ այսպէս անուանուած մեծ մարդկանց ժողովուրդների արդիւնք է համարում: Գիտութիւնը խնայել չգիտէ ոչ քաղաքական, ոչ էլ կրօնական իդէալները: Ինչպէս քրիստոնեաները երբեմն վայր էին գլորում կռապաշտական կուռքերը պատուանդանների վերայից և ցոյց տալիս զարհուրած ժողովրդին, որ այն մեծ Աստուածը, որից իրենք այդպէս վախենում էին, ոչ այլ ինչ է, եթէ ոչ փթած փայտ, կամ քարերի կոյտ, այդպէս էլ գիտութիւնն է դէն շպրտում մեծ մարդկանց պատուանդանների վերայից և ցոյց է տալիս, որ դրանց երկրպագելով՝ ժողովուրդները երկրպագած էին լինում իրենց սեփական երևակայութեանը (фантазія): Վերցնենք պատմական առասպելի մեզ նկարագրած ամենազօրեղին—Նապալէօնին, այո, այդ Նապալէօնին: Ո՞ր-պիսի առասպելներ ասես, որ կապուած չեն նրա անունը. Ինչպիսի դերմարդկային գործեր ասես, որ չեն վերագրում նրան: Թող այդպէս լինի—բայց պատմական քննադատութիւնը պոկեց նրա գլխից ճաճանչափայլ պսակը և իջեցրեց այդ անսովորական մարդուն հասարակ արկածախնդիրի աստիճանի, որը խորամանկ խաղացողի ճարպիկութեամբ օգուտ քաղեց յեղափոխական ալիքի յետ քաշուելուց—նահանջումից, որպէս զի բռնի այն շահաւէտ դիրքը, որ հանգամանքներն ստեղծեցին

նրա համար: Նրա պատերազմական և օրէնսդրական սխրագործութիւնները զուրկ են իրենց գողունի փայլից և ասացուցած է, որ բոլոր ասպարէզներում էլ իւր փառքով պարտական է նա Ֆրանսիական յեղափոխութեան ստեղծագործութիւններին—հետևապէս ոչ առանձին մեծ մարդու, այլ մարդկանց մեծ ընկերակցութեան: *) Պատմութեան դատավճռի համաձայն և ուղիղ դատողութեան հիման վերայ, թէ մարդիկ չեն կարող ազատ լինել, քանի դեռ չեն ազատուել ամեն մի սնոտիապաշտութիւնից և առանձնապէս անձի պաշտամունքից (որը խաղաղութեան պաշտամունքներից ամենասարսափելին է, քանի որ երկրի վերայի կուռքերը մօտ են մեզ և այդ պատճառով էլ աւելի երկիւղալի մեզ համար, քան այն կուռքերը, որոնք երկինք են քշուած)—դիտակցելով այս ճշմարտութիւնը՝ փարիզեան կօմմունան ջախջախեց Վանդոմեան սիւնը. և մենք էլ յուսալ կարող ենք, որ շուտով բոլոր այդ տեսակ կուռքերը՝ սեռած թէ կենդանի, մարմրից—ոսկրից կազմուածները, թէ երկաթից ու մարմարից ջարդ ու փշուր պէտք է լինին:

Գիտական պատմութիւնը դէմոկրատիայի ամենահիմնաւոր ուսուցիչն է, քանի որ նա հրապարակ է հանում արիստոկրատիայի բոլոր պահանջներն իրենց ոչնչութեամբ: Նա օժանդակում է հերոսների և խեղկատակների չքանալուն և իրաւունքը թողնում է մարդուն, թողնում է իւրաքանչիւրին: Մենք մեր քաղաքակրթութեամբ պաշտօնական ենք ոչ թէ մի քանի ընտրեալների գերբնական ուժին. ոչ, մարդկութիւնը բարձ-

*) Կառավարչական, զինուորական, նաև օրէնսդրական ասպարէզներում Նապալէօնն, ինչպէս այժմ հաստատուած է, գործածել էր իրեն Ազգային ժողովի և Կօնվենտի փետուրներով:

բացել է խազաղ Ովկիանոսի մարջանէ (коралль) կղզիների նման, շնորհիւ անհամար սերունդների միլիոն ու միլիարդ անհատների խմբական աշխատութեան։ Կամ ուրիշ օրինակ բերենք. դուք, բարեկամներ, ի հարկէ, լսած կը լինիք ինֆուզորիաների *) գոյութեան մասին. դրանք այնքան փոքր են, որ միայն խոշորացոյցով կարելի կը լինի տեսնել դրանց. բայց դրանք շնորհիւ խմբական աշխատանքի փոխել են երկրի մակերևոյթը, ձեզ նոյնպէս յայտնի կը լինի, ի հարկէ, որ Բելգիոնը շինուած է մասամբ այդպիսի ինֆուզորիաների շերտի վերայ։ Ահա այդ ինֆուզորիաների նման, որ հազարհազար տարիներ պէտք է աշխատէին, որ կարողանային «նոր կայսերական մայրաքաղաքի» հոյակապ շէնքերի հիմքը դնել, հէնց այդպէս էլ պէտք է հազարհազար մարդկային սերունդներ աշխատէին, որ կարողանային մեր ժամանակակից քաղաքակրթութեան հիմքն ստեղծել։ Այս կամ այն մարդը չէ մեզ հասցրել այս բարձրութեան. ոչ, այս բոլորի խմբական-հաւաքական աշխատանքն է. և եթէ ենթադրենք նոյն իսկ, որ բոլոր այդ գերբնական մարդիկ գոյութիւն չունենային, այնուամենայնիւ մենք մեր կանգնած տեղից աւելի հեռու կանգնած չէինք լինի։

Մեր հակառակորդներն անգիտակցաբար ընդունում են այս բոլորը՝ ցեխի մէջ ձգելով իրենց մարդկային կուռքերը, եթէ վերջիններս դադարում են նրանց ծառայել. ճիշտ այնպէս, ինչպէս վայրենիները ջարդուփշուր են անում իրենց կուռքերը, երբ սրանք հրաժարւում են նրանց ցանկացած հրաշքները կատարել։ Իւր հօրեղբօր, գողի կեղծ եղբօրորդի Բօնապարտը, որ

*) Ջրի մէջ եղած մանր որդեր։

երէկ դեռ աշխարհի ամենամեծ «պետական մարդն էր, այսօր արհամարհուած իւր երկրպագուների կողմից՝ ոտնահար ընկած է փոշու մէջ, իսկ նրա տեղ իրրև կուռք բարձրանում է Բիսմարկը։ Բայց երկար. այդ մենք չգիտենք. մի բան միայն գիտենք, որ այս կուռքն էլ կ'ընկնի և ամենից աւելի անէծքի կ'արժանանայ նրանց կողմից, ովքեր ամենից աւելի ստրկօրէն նրան խունկ են ծխում։ Մեր դատողութիւնն այն ժամանակ կը լինի և աւելի արդարացի ու աւելի հիմնաւոր, քանի որ չենք հիասթափուի և նրա անկումից յետոյ էլ մեր կարծիքը նրա մասին չի փոխուի ոչ դէպի լաւը և ոչ էլ դէպի վատը։

Բարեկամներ, ներեցէք, որ մի քիչ շեղուեցի. ես ցանկացայ միայն պարզել, թէ ինչ անհիմն ենթադրութիւնների արդիւնք է այն հայեացքը, որ իբր թէ մարդկային զարգացումն առանձին, յատկապէս բարեկամ առանձնապէս չար անհատների աշխատանք է։ Ինչ վերաբերում է անցածին, նոյնը վերաբերում է նաև ներկային։ Հաստատել, որ ներկայ սոցիալական շարժումը առաջ են բերել արհեստական եղանակով մի խումբ ինքնակամ, քմահաճոյ և պատժի արժանի մարդիկ, նշանակում է հակառակ գնալ գիտութեանը. այս բանը միայն երեխաների, ագէտների և ոստիկանական հոգիների գլխից կարող է դուրս գալ. իսկ սրան հաւատալ կարող են նմանապէս միմիայն երեխաները, ագէտներն ու ոստիկանական հոգիները։

Մեր ձգտումը—«յեղափոխական ձգտումն է»։ Յեղափոխութիւն. սոսկալի սարսափի նկար երկու սեռի բոլոր թուլամորթների համար։ Այո, մենք յեղափոխական ենք. մենք ցանկանում ենք ժամանակակից հասարակութեան բարեփոխութիւն ոտից մինչև գլուխը։ Սա-

կայն նայենք այդ սարսափի նկարի ուղիղ աչքերի մէջ և սարսափը կը ցրուի։ Մենք ապրում ենք յեղափոխութեան մէջ և ապրում ենք շնորհիւ այդ յեղափոխութեան։ Ամբողջ մարդկային պատմութիւնը՝ մշտական յեղափոխութիւն է. նա ներկայացնում է ծնունդ, աճումն, մշտական փոփոխութիւն, որովհետև շարունակ կեանք է արտադրում։ Բանի դեռ մարդն ապրում է, նա յեղափոխական է նրանով, որ անբաւական է իւր էութիւնից, անբաւական է նրանով, ինչ որ ունի, անդադար ձգտում է դէպի բարձրը—հէնց այդ բանի մէջ է նրա մարդկային էութիւնը։ Կը դադարի մարդը, կը դադարի նաև մարդկութիւնը յեղափոխական լինելուց, այդ ժամանակ կը դադարի մարդը, կը դադարի մարդկութիւնը գոյութիւն ունենալուց։ Յեղափոխութեան, շարժման մէջ է կեանքը, յեղափոխութեան, բացակայութեան, անդորրութեան մէջ՝ մահը։

Բայց յեղափոխութիւն բառն ունի մի ուրիշ աւելի նեղ նշանակութիւն. այդ խօսքի տակ հասկացւում է «բունի» պառակտումն բոլոր պետական և հասարակական ձևերից։ Այդ այդպէս է. բայց ո՞վ է առաջ բերում և ինչից է ծագում այդ բանի պայթիւնը։ Ո՞ւմ վերայ է ընկնում բոլոր նախկին յեղափոխութիւնների պատասխանատուութիւնը։ Արդեօք նրանց վերայ, որոնք մարդկային զարգացման օրէնքների հիման վերայ ձգտում էին նոր ձև տալ նոր բովանդակութեանը, նոր արտայայտութիւն՝ նոր գաղափարներին.—ոչ, մեղաւորը նրանք են, որոնք իրենց եսասիրութեան կամ կարճատեսութեան պատճառով աշխատում են խանգարել մարդկային զարգացման ընթացքը։ Ինչպէս վտակը, բերում եմ այստեղ այս թէև յաճախ գործածուած, բայց շատ յարմար համեմատութիւնը, հոսում է հանգիստ քանի դեռ

նրան խանգարող ոչ մի արգելք չկայ, իսկ հանդիպելով ժայռերի՝ կազմում է կատաղի աղմկող ջրվէժներ, կամ ոչնչացնելով ամեն ինչ իւր չորս կողմում՝ դուրս է գալի ափերից—այդպէս է նաև աշխարհային պատմութեան ընթացքը։ Միայն այնտեղ են առաջանում սահանքներ, ջրվէժներ, հեղեղներ,—ապստամբութիւն, խռովութիւն, յեղափոխութիւն, ուր աճում—մեծանում են խոչընդոտները։ Այսպէս, ուրեմն, այն բոլոր յեղափոխութիւնները, այս աւելի նեղ իմաստով, որոնց վերայ աւանդում է մեզ պատմութիւնը, առաջ են եկել ոչ թէ այսպէս անուանուած յեղափոխականների միջոցով, այլ նրանց ձեռքով, որոնք արգելքներ են յարուցել զարգացման բնական ընթացքի առջև։ Հենց այդ պատճառով էլ բոլոր յեղափոխութիւններն կրում են ո՛չ յարձակողական, այլ պաշտպանողական բնաւորութիւն։ Պաշտպանողական է գիւղացիական կռիւը (крестьянская война)—այդ կռիւը տեղի ունեցաւ պաշտպանելու համար մարդկային ամենասուրբ իրաւունքներ, որոնք չէին ընդունում աւատական (ֆէօդալական) պետութեան կողմից, պաշտպանողական էր Բաստիլիայի առումը—որ անհրաժեշտ դարձաւ՝ պալատական զօրքերի սպառնական շարժումների պատճառով. պաշտպանողական էր 1792 թ. օգոստոսի 10-ին Տիլրի-ի առումը և terrorիզմը—այս բոլորն անհրաժեշտ էր, որպէս զի կարելի լինէր պաշտպանել Ֆրանսիան ներքին դաւադրութիւններից և արտաքին յարձակումներից. յուլիսեան յեղափոխութիւնը պաշտպանողական էր ընդդէմ փչացած բուրժուազական թագաւորութեան ազդեցութեան. մարտի յեղափոխութիւնը ծառայեց որպէս պաշտպանողական

միջոց՝ ուղղուած կամարիլիայի *) ժողովրդի շահերին ընտրական գործողութիւնների դէմ. պաշտպանողական էր նաև յունիսեան կռիւը, որը պրոլետարիատի վրայ փաթաթեց բուրժուազիան՝ ցանկանալով, ինչպէս էլ որ լինի, խեղդել սոցիալիզմը. պաշտպանողական էր նաև սեպտեմբերեան յեղափոխութիւնը, որն առաջ եկաւ ազատելու Ֆրանսիան Սեդանի մօտ տեղի ունեցած խայտառակ պետական անակնկալ փոփոխութեան (переворотъ) հետևանքներից. պաշտպանողական միջոցով վերջապէս առաջ եկաւ կոմմունան, այդ ողբերգական փորձը, որպէս զի կարելի լինէր ազատել Ֆրանսիական հասարակապետութիւնն այն բանից յետոյ, երբ Ֆրանսիան մի տարուայ մէջ երկու անգամ մատնուեց իւր կառավարութեան ձեռքով:

Այսպէս էլ ապագայում չի լինի ոչ մի յեղափոխութիւն, եթէ ոչ պաշտպանութեան նպատակով: Մենք յեղափոխական ենք. բայց յեղափոխական շարժումը, որի մէջ և որի համար մենք գործում ենք, միայն այն դեպքում բանուորիւն կը ներկայանայ և արիւնհեղութիւն կ՚առաջացնի, երբ այդ կը ցանկանան մեր հակառակորդներն. այսինքն կառավարութիւնը և բուրժուազիան:

Բարեկամներ, այն բանից յետոյ, երբ ես ընդհանուր գծերով աշխատեցի ցոյց տալ—ապացուցել, որ մեր շարժումն արհեստական եղանակով չի առաջացել, այլ օրգանական կերպով բուսել-աճել է հանգամանքներից, հետևապէս չի կարող կանգ առնել, քանի դեռ պատճառները չեն վերացրած, այժմ կ՚աշխատեմ ջոկ-ջոկ

*) Թագաւորին շրջապատող պալատականներ, որոնց ազդեցութեամբ և ցուցմունքներով վարում է Թագաւորը իւր իշխանութիւնը:

քննել այն բոլոր գլխաւոր մեղադրանքներն, առարկութիւնները, յարձակումները, որ մեր գլխին է թափում մեր թշնամի մամուլը. և որոնց շնորհիւ աշխատում են մասամբ ձգել մեր կուսակցութեան արժանիքը հասարակութեան աչքում, մասամբ էլ բաժանում ձգել մեր կուսակցութեան մէջ:

Ամենից առաջ նրանք աշխատում են կարգաբանական կերպով (սիստեմատիկ) բամբասել—զրպարտել այսպէս կոչուած «առաջնորդներին», որ ղրկեն նրանց այն հաւատից, որ տածում են դէպի նրանց մնացած ընկերները: «Առաջնորդներն», ասում են նրանք—և մենք ամեն օր կարող ենք տեսնել այս բանը փոքր ու մեծ պաշտօնական բուրժուազական թերթերում,—«առաջնորդները» «կերակրուում են բանուորների քրտինքով», «նրանք քէֆերի մէջ են անցկացնում իրենց ժամանակը՝ բանուորների հաշուով»: «Իրենց քաղաքական գործունէութեան վերայ նայում են, որպէս արդիւնաւէտ գործի-պաշտօնի վերայ» և այլն: Ես, ի հարկէ, ճանաչում եմ այնպիսի մարդկանց, որոնք չաղանում են բանուորների քրտինքով և քէֆ են քաշում բանուորների հաշուով և այդ մարդիկ՝ պարոն բուրժուաներն են, որոնք հարստանում են իրենց վարձու ստրուկների հաշուով, որոց աշխատանքի համար լրիւ աշխատավարձ չեն վճարում. և ինչ վերաբերում է պարոն աստիճանաւորներին, գոնէ բարձր աստիճանաւորներին—քանի որ ցածր աստիճանաւորը պատկանում է պրոլետարների դասին և նրա շահերը պահանջում են պրոլետարի հետ ձեռք ձեռքի տուած առաջ գնալ—ես հարցնում եմ. որտեղից է դուրս գալիս նրանց պահելու ռոճիկը. չէ՞ որ հարկերից. իսկ ո՞վ է վճարում հարկերը, ոչ այլ որ, եթէ ոչ բանուորը. արդիւնաբերական-գործարանական

ու գիւղական բանուորներն են, որ վճարում են բոլոր հարկերը, նոյն իսկ այն հարկերը, որոնք ուղղակի հարկերի ձևով չեն առնուում։ Թող այդ պարոնները մի նայեն իրենք իրենց։ «Ապրել բանուորների քրտինքով»։ Պարոն բուրժուաներն իրօք այնքան հիմնաւոր կերպով են զբաղուում այս գործով, որ մեզ համար ոչինչ չի մնում։ Եւ ի՞նչ կարող ես վերցնել բանուորներից։ Ներկայիս շահագործութեան եղանակը նրան այնքան չի տալիս, որ նա կարողանայ գոնէ մի քիչ մարդավարի կեանք վարել։

Երբ այսպէս անուանուած առաջնորդները պատկանէին այն մարդկանց շարքին, որոնք գործում են ոչ թէ հաւատքով, այլ շահագիտական նպատակներով, այն ժամանակ նոքա կը դիմէին ուր հարկն է. այստեղ որտեղից կարելի է մի բան ստանալ. կը դիմեին պարոն բուրժուաներին եւ կառավարութիւններին, որոնք անհագին բանակութեամբ փող ունին։ Նա, ով ուզում է ծախել իրեն, կը ծախի նրան, ով ամենից աւելի փող կը տայ։ Ես չեմ ուզում խախտել այդ հրապարակախօսների հաւատը դէպ՝ իրենց ասածը. թէև նրանք իրանց տէրերի յանձնարարութեամբ են շպրտում մեր երեսներին այդպիսի մեղադրանքներ, բայց յամենայն դէպս նրանք բախտ ունին ծառայելու այնպիսի գործի, որի մէջ է գտնուում ամենից աւելի և նոյն իսկ բոլոր փողերը և որը կարող է լաւ, շատ լաւ կերպով վարձատրել նրանց աշխատանքը, և եթէ այդ լրագրագիրները տաղանդի տէր են—էլ աւելի փառաւոր։ Պրուսական մամուլի ֆօնդի միլլիոնները՝ պետութեան և հասարակութեան մէջ լաւ վարձատրող տեղերն են—բայց այդ բոլորը մեզ համար չէ։

Բոլորովին անկախ նիւթական շահից՝ ի՞նչ «առաւելութիւններ» ունին «առաջնորդները»։ Չլինի՞ այն առաւելութիւնը, որ կուուելով առաջին շարքերում իբրև նշան են ծառայում հակառակորդների յարձակման և իշխանութիւնների հալածանքների համար։ Եւ որ աւելի վատն է, նրանցից խլուած է կանոնաւոր աշխատանքը, վաստակը և նրանք դուրս են ձգուած կեանքի սովորական ճանապարհի վրայից։

Կռիւն ինքն ըստ ինքեան — ինչպիսի անաղնիւ հրացանով էլ որ մղեն մեր դէմ, մենք չէ՞ որ ոչ միայն քաղաքականապէս, այլ և բարոյապէս օրէնքի պաշտպանութիւնից դուրս ենք համարուում. մեր վերաբերմամբ գործ են ածում. contra haereticos nulla fides. հերետիկոսներին՝ ոչ հաւատարմութիւն, ոչ էլ հաւատ։ Կռիւն, ասում եմ, ինքն ըստ ինքեան ունի իւր և՛ վերզովեցուցիչ կողմը, և գրաւչութիւնը-հրապոյրը. բայց ընտանեկան բախտաւորութեան յաճախակի խախտումը, խանգարումը, լինել-չլինելու անորոշութիւնը, մի կտոր հացի հոգսը, որը երբեմն հասնում է ծայրայեղ կարիքի.—նախանձելի՞ է արդեօք այս վիճակը։

Ով ծախում է իրեն, նա այդ անում է, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ճոխ-շռայլ կերպով ապրելու և ոչ թէ նրա համար, որպէս զի կարիքի մէջ լինի, քաղցած ապրի։ Մեր կուսակցութեան, այսպէս անուանուած առաջնորդների մէջ, ես ոչ մէկին չեմ ճանաչում, որը շնորհիւ կուսակցութեան մէջ բռնած դիրքի, նիւթական զրկանք կրած չլինի։ Եւ հէնց դրա մէջ է ապնուութեան և անձնազոհութեան ամենաճիշտ ապացոյցը։ Ի հարկէ մեր հակառակորդների համար, որոնք գործնականութեան մէջ եսասիրութիւնը դարձրել են իրենց միակ ուղեցոյցը, իսկ տեսականի մէջ իրենց առաջ բերած քաղաքա-անտեսական ուսման անկեան քա-

ը, այդպիսի անձնազոհութիւնն անհասկանալի է. նը-
բանք ընդունակ չեն հասկանալու, որ կան սկզբունք-
ներ և իդէալներ, որոնք անզգալի են դարձնում կա-
րիքն ու վտանգը այն մարդկանց համար, որոնք ընդու-
նել են այդ սկզբունքներն ու իդէալները։ Փառասի-
րութիւնը, մրցութիւնը, ճիշտ է, ուժեղ խթան է ներկա-
յանում, բայց հազար անգամ աւելի ուժեղ խթան է
նրա պարտականութեան զգացմունքը և իրաւունքի
գիտակցութիւնը։

Բարեկամներ, ես այժմ կանգ կ՝առնեմ սոցիալ-
դեմոկրատիայի հասցէին ուղղած այն զանազան մեղա-
դրանքների վերայ, որոնք արւում են երկու նպատա-
կով. նախ՝ գրգռելու հասարակութեան կարծիքը մեր
դէմ, երկրորդ՝ թեքել մեր կուսակցութեան այն ան-
դամներին, որոնք փոքրոգի և անհաստատ են իրենց
սկզբունքների մէջ։ Թէ որքան յաջողուեց նրանց առա-
ջինը՝ մենք այստեղ չենք քննելու. ինչ վերաբերում է
վերջինին՝ թէև այդ ձգտումը բոլորովին զուր է, այ-
նուամենայնիւ չի կարելի բացասել, որ մեր ընկերնե-
ը՝ տեղական թերթերի այդպիսի մեղադրանքների
ազդեցութեան տակ, մի վայրկեան շփոթեցան։ Յայտ-
նի տեղ գրւած լինելով կուսակցական թերթի մէջ՝
շատ անգամ առիթ ունեցայ համոզուելու այդ բանի
մէջ։ Կարգով նայենք այժմ այն բոլոր նշանաւոր մե-
ղադրանքները, որ ուղղում են մեր դէմ։

Ամենից առաջ, ես սրանից եմ սկսում, որովհետև
հակառակորդների համար սա առաջին տեղն է բռնում,
—մեզ մեղադրում են նրանում, թէ մենք ցանկանում
ենք ոչնչացնել սեփականութիւնը։

Այո, բարեկամներ, սրանից անմիտ սուտ դեռ չի
եղել։ Ի՞նչ է սեփականութիւնը։ Բանականութեան և

գիտութեան հիման վերայ՝ տնտեսական մտքով արժէ-
քի արտադրութեան միայն մի աղբիւր կայ, դա աշխա-
տանքն է։ Միայն աշխատանքն է արտադրում տնտեսա-
կան արժէք (цѣнность)։ Դրամագլուխը (капиталъ),
որ ըստ բուրժուազիայից վարձուած քաղաքա-տնտես-
ների՝ արժէքի արտադրութեան երկրորդ գործօնն է
(факторъ), ներկայանում է ինքն ըստ ինքեան որպէս
արդիւնք աշխատանքի։ Եւ որովհետև աշխատանքն է
արտադրում արժէք, ուրեմն և այդ աշխատանքն իրա-
ւունք ունի իւր արտադրած արժէքի վերայ. այսինքն
սեփականութեան իրաւունք։ Այդ սեփականութեան ի-
րաւունքը սոցիալդեմոկրատիայի հիմնական սկզբունքն
է։ Իւրաքանչիւր բանուոր պիտի է ստանայ իւր աշխատան-
քի լրիւ արդիւնքը.—ուրիշ խօսքով՝ իւրաքանչիւր բա-
նուոր սեփականութեան իրաւունք ունի իւր աշխատան-
քի ամբողջ արդիւնքի վերաբերմամբ։ Իմ սեփականու-
թիւնը թող իմ սեփական աշխատանքի արդիւնքը լինի։
Եւ որովհետև այս որոշումից—կանոնից՝ թէ իւրաքան-
չիւրն իրաւունք ունի իւր աշխատանքի վերայ, ծա-
գում է մի ուրիշ կանոն—ոչ ոք իրաւունք չունի ուրիշի
աշխատանքի արդիւնքի վերայ, ուստի սոցիալիզմը ձգ-
տում է սեփականատէր դարձնել իւրաքանչիւր աշխա-
տաւորի և ստիպել քաղցած մնալու (չեմ ասում. քաղցից
մեռնելու) նրան, ով կարող է աշխատել, բայց չի աշ-
խատում։ Ես չեմ կարծում, թէ լինի մէկը, որ մեզ նման
վճռական կերպով պաշտպան հանդիսանայ սեփակա-
նութեանը։ Արդէն ներկայումս երբ շուքը—փարթա-
մութիւնը աշխատանքից աւելի է գնահատւում, և մարդ-
կանց նիւթական դրութիւնը հակառակ համեմատական
է նրանց աշխատանքի արտադրութեան և պարապմունք-
ների օգտակարութեան, մարդկանց անգին մեծամաս-

նութիւնը պէտք է աշխատի, ասում եմ իսկապէս աշխատի ոչ ի սէր բաւականութեան կամ «հոգևոր» կերպով, ինչպէս պարոն բուրժուաներն են, ի միջի այլոց, հանաքով իրենց համար հաստատում,—հետևապէս հէնց արդէն ներկայումս մարդկանց մի ահագին մեծամասնութիւն՝ սեփականութեան մասին մեր ունեցած հասկացողութեան համաձայն, պէտք է որ սեփականատէրերից բաղկացած լինէր: Սակայն ինչպէս պէտք է լինի սեփականութեան մասին ներկայումս տիրող հասկացողութեան համաձայն,—մեր հակառակորդների սեփականութեան մասին ունեցած հասկացողութեան համաձայն: Միայն աննշան փոքրամասնութիւնն է սեփականատէր. սեփականութիւնը մի դասակարգի մենաշնորհն է (монополія), դասակարգը ներկայանում է ընակչութեան մի փոքր մասը, իսկ ահագին մեծամասնութիւնը հէնց իրեն օգտի համար պէտք է հրաժարուի սեփականութիւնից և սեփականութիւն ստեղծի փոքրամասնութեան համար: Հէնց այս պատճառով էլ հէնց մենք դէմ ենք գնում բուրժուազիային. նա բանուորին զրկում է սեփականութիւն ունենալու հնարաւորութիւնից. նա գողանում է բանուորի սեփականութիւնը, որ իրաւամբ վերջինիս է պատկանում: Ուղիղ հասկացէք ասածներս. ես չեմ ուզում իւրաքանչիւր բուրժուայի, առանձին վերցրած, ճակատին գողի կնիք դրոշմել. ընդհանրապէս մենք անհատների հետ գործ չունինք, այլ կարգի (սիստեմ)—հակառակ մեր հակառակորդների, որոնք չեն համարձակւում քննադատել մեր կարգը—սիստեմը, ուստի մեզ անհատապէս աշխատում են սևացնել—և սա ճիշտ նշան է, որ նրանք հէնց իրենք չեն հաւատում իրենց գործի արդարութեան և ուժին: Ես այստեղ առանձին բուրժուաների մասին չեմ խօսում. ես հեռու

եմ նրանց անհատապէս պատասխանատուութեան տակ ձգելու ժամանակակից հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող չարիքի պատճառով: Պատմական և տնտեսական զարգացման վերայ մեր ունեցած հայեացքը հէնց սկզբից բացատրել է այդպիսի ենթադրութիւններ:

Բուրժուական աշխարհը ընութեան օրէնքի անհրաժեշտութեամբ առաջ եկաւ աւատական աշխարհից ճիշտ այնպէս, ինչպէս աւատական աշխարհն իր կողմից՝ հին աշխարհից:

Մենք պատմութիւնը օրգանական և ոչ թէ մեքենայական տեսակէտից ենք հասկանում. մենք գիտենք, որ ամեն բան պէտք է պատճառ ունենայ, իւր արդարացումն ունենայ. և միայն ամենաակնյայտնի տգիտութիւնը կարող է աշխարհի երևոյթների մէջ բարի կամ չար սկզբունքների կամայականութիւն նկատել: Մենք չենք համարձակուի ասել. «մարդկութիւնը մինչև այժմ առաջ է գնացել, սխալ ճանապարհով. մենք ցոյց կը տանք նրան իսկական ուղիղ ճանապարհը և ով այնպէս չի մտածում, ինչպէս մենք ենք մտածում, նա յիմար է և ստոր»: Այսպիսի լեզուով խօսում են տհաս մանուկները կամ շարլատանները: Գիտութիւնն իրերի առարկաների մէջ սխալ չի ճանաչում. այլ այն բանի մէջ, թէ ինչպէս են հասկացւում այդ իրերը: Ներկայ ժամանակի արդիւնաբերութիւնը օրգանական կերպով զարգացել է նախկին արդիւնաբերութեան եղանակներից (սիստեմ). նա ներկայացնում է արդիւնաբերութեան աւելի բարձր սիստեմ, քան նախկին սիստեմներն էին և հէնց այդ պատճառով էլ ունի իրեն լիակատար արդարացումը: Սակայն այժմ նրա ճանապարհի վերայ արդիւնաբերութեան մի նոր սիստեմ է առաջ գալիս—սոցիալիստականը,—որին տեղի պէտք է տայ նա, ի

հարկէ. ճիշտ այնպէս, ինչպէս իրեն տեղի տուեց միջնադարեան և ժանր-բուրժուական արդիւնաբերութիւնը։

Այսպիսով, մենք ոչ թէ ընդհանրապէս սեփականութեան դեմ ենք ելնում, այլ միմիայն ներկայ ձեւի սեփականութեան դեմ—այն սեփականութեան, որը ձեռք է բերուած ուրիշ մարդկանց շահագործելով, այն մարդկանց, որոնք դատապարտուած են բոլորովին զուրկ լինելու սեփականութիւնից։

Թուղթիկ կերպով նայենք, թէ ինչպէ՞ս է ներկայումս ստեղծուում սեփականութիւնը։ «Աշխատանքն է աղբիւր ամեն մի հարստութեան»,—այս՝ լոութեամբ ընդունուում է գիտական քաղաքատնտեսութեան կողմից։ Սրանից հետևում է, որ ոչ ոք իրաւունք չունի այն արժէքի-արժէք ունեցող իրի վերայ, որն իրեն սեփական ափսատանի արդիւնքը, կամ արդիւնքի հաւասարը չէ։ Սակայն արդէն ապացուցած է, որ բանուորական ուժը և մարդկանց արտադրական ընդունակութիւնը մօտաւորապէս հաւասար են միմիանց—մէկը մի քիչ աւելի է աշխատում, միւսը մի քիչ պակաս, բայց միջին թւով այդ աւելն ու պակասը հաւասարակշիռ են դառնում։

Սրանից դուրս է գալիս, որ բոլոր մարդկանց աշխատանքի արդիւնքը, երբ նրանք օգտուին արտադրութեան նոյնանման գործիքներով—որն, ի հարկէ, միշտ էլ պատահում է միևնոյն ժողովրդի մէջ,—մօտաւորապէս նոյնն է և հետևապէս, եթէ իւրաքանչիւր մարդ ստանար իւր անհատական աշխատանքի արդիւնքը, ուրեմն բոլորն էլ կունենային մօտաւորապէս միանման սեփականութիւն։ Բայց, ինչպէս ձեզ յայտնի է, իրականութեան մէջ այդպէս չէ. ընդհակառակը լիակատար անհաւասարութիւն է տիրում։ Ինչո՞ւ է այդպէս։ Դուք,

բարեկամներ՝ գտնուելով գործարանական քաղաքում, հիանալի միջոց ունիք դիտելու, թէ ինչպէ՞ս է առաջ գալիս հասարակական անհաւասարութիւնը. ձեզնից իւրաքանչիւրը ճանաչում է որ և է գործարանատէրի և տեսել է, թէ ինչպէ՞ս է նա հարստացել։ Վերցնենք, օրինակ, իսկական օրինակելի բուրժուա Ցիմմերմանին Խեմնից-ից, որի մասին, հաւանական է, որ բոլորդ էլ լսած լինիք—Կրիմմիտշաուում ես չեմ ճանաչում և ոչ մի գործարանատէրի—քսան, թէ երեսուն տարի առաջ նա—Ցիմմերմանը եկաւ Խեմնից այնպէս ապքատ, ինչպիսին է մեզնից ամենաաղքատը. նրան յաջողուեց մի փոքրիկ դրամագլուխ ժողովել.—այն ժամանակ խոշոր արդիւնաբերութիւնն այսպէս զարգացած չէր, իսկ դրամագլուխն էլ կենդրոնացած չէր մի քանի ձեռքերում, և կարելի էր հարիւր տալերով *) ձեռնարկութիւն սկսել, որն այժմ հազարներով էլ գլուխ չի գայ։ «Բախտը նրան ժպտաց». այսինքն նա պատուէրներ ստացաւ, որոնք կատարուում էին նրա վարձած բանուորների ձեռքով, բացի այն մասից, որն իրեն—Ցիմմերմանին էր վիճակուում կատարելու, որն, ի միջի այլոց, աւելի շատ չէր, քան այն, ինչ որ իւրաքանչիւր բանուորի էր վիճակուում կատարել, քանի որ բոլորին էլ յայտնի է, և հէնց այդ պատճառով էլ այս օրինակն այդպէս խրատական է—որ պարոն Ցիմմերմանը ոչ աւելի, քան միջակ ընդունակութեան տէր մարդ էր։

Այսպիսով պարոն Ցիմմերմանն սկզբում ունէր մի դիւժին բանուոր, յետոյ հարիւր հատ, վերջերում հազարից աւելի, իսկ այժմ պարոն Ցիմմերմանը միլիոնչի է, հետևապէս սեփականատէր comme il faut, այն ինչ նրա բանուորները ոչինչ չունեցող պրոլետարներ են։

*) Տալերը=1 ր. 50 կ.

Ինչի՞ վերադրել այս զանազանութիւնը։ Աշխատանքի որակով բացատրել, անկարելի է, քանի որ պարոն Ցիմմերմանի անհատական աշխատանքը միջակութիւն է ներկայացնում. նա, հաւակնաբար, ոչ լաւ, և ոչ էլ, ըստ ժամենայն հաւանականութեան, շատ էր աշխատում, քան նրա բանուորներից շատ շատերը։ Այնուամենայնիւ նա միլիոնչի դարձաւ, իսկ բանուորները մնային պրոլետար։ Նրա սեփական աշխատանքի եկամուտը չէր կարող նրան միլիոնչի դարձնել. եթէ աշխատանքը նրա գործարանում այնքան եկամուտ բերէր, որ իւրաքանչիւր բանուոր կարողանար միլիոնչի դառնալ, այդ դէպքում նրա բոլոր բանուորները, կամ առ նուազն նրանցից շատերը միլիոնչի դարձած պէտք է լինէին։ Սակայն նրանք պրոլետար էլ մնացին հէնց։ Բայց ահա թէ բանն ինչումն է, բարեկամներ, պարոն Ցիմմերմանն ստանում էր իւրաքանչիւրի աշխատանքի արդիւնքի մեծ մասը, իսկ բանուորները՝ փոքր մասը։ Պարոն Ցիմմերմանի բանուորները պէտք է պրոլետար էլ մնային հէնց այն պատճառով, որպէս զի Ցիմմերմանը միլիոնչի դառնար։ Եւ եթէ ամեն մի աշխատանք տուող՝ Ցիմմերման չի դառնում, բայց յամենայն դէպս նրանցից իւրաքանչիւրն ընդհանրապէս—նոյնպիսի միջոցով դառնում է խոշոր կապիտալիստ (փողատէր), ինչպիսի միջոցով որ պարոն Ցիմմերմանը. այսինքն իրենց բանուորների աշխատանքի միջոցով։

Հետևանքն ակնյայտնի է, բայց պատճառներն այդքան պարզ չեն։

Ես հէնց նոր գործ ածեցի աշխատանք տուող բառը. իսկապէս պէտք էր ասել աշխատանք վերցնող։ Հին աշխարհը սիրում է այնպիսի արտայայտութիւններ, որոնք բոլորովին աղաւաղում են գաղափարները և յա-

ճախ նոյն իսկ յեղաշրջում։ Նա աշխատանքատու (աշխատանք տուող) է կոչում նրան, ով օգտուում է ուրիշների աշխատանքից, իսկ աշխատանքաքաշ (աշխատանք վերցնող) նրան, ով իր աշխատանքը տալիս է ուրիշին։ Ներկայ ժամանակի խոշոր արդիւնաբերութիւնը թոյլ չի տալիս, որ որ և է մէկը արդիւնաւոր կերպով աշխատէ իւր համար իւր հաշուով. նա ստեղծում է շատերի մասին աշխատելու անհրաժեշտութիւնը. յետոյ նա պահանջում է արդիւնաբերութեան բարդ մեքենաներ, որոնց ձեռք բերելը այն բոլոր մարդկանց ուժից վեր է, որոնք օգտուում են միմիայն իրենց աշխատանքի եկամուտով—որքան որ այդ աշխատանքը ներկայ կարգերի մէջ ընդհանրապէս եկամուտ է տալիս։ Սրանից հետևում է, որ բոլոր այն մարդիկ, որոնք չունին բաւականաչափ դրամագլուխ-կապիտալ,—իսկ այդ բանը արդիւնաբերութեան ներկայ դրութեան մէջ՝ ոչ ոք չի կարող ձեռք բերել իւր սեփական աշխատանքով—պարտաւոր են ծախելու իրենց աշխատանքը մի երրորդին, որն ունի այդ անհրաժեշտ կապիտալը։ Այն գինը, որ տրուում է այդ աշխատանքն գնելու համար, ներկայանում է որպէս աշխատավարձ։ Եւ, պէտք է ի միջի այլոց նկատել, այդ աշխատավարձով առնում է ոչ միայն աշխատանքը, այլ դրա հետ միասին նաև բանուորը, որը չի կարող բաժանուել իրեն աշխատանքից և իրեն աշխատանքի հետ միասին պէտք է ծախի նաև իրեն։ Ինչպէս գիտէք, գնողը հաստատում է, որ ինքը ծախուողի «բարերարն» է. չէ՞ որ նրան «տալիս» է աշխատանք-գործ, դրա հետ միասին էլ հաց, որը նա ուրիշ կերպ ճարել չէր կարողանայ։ Այս—այսպէս կոչուած աշխատանքատուի տեսութիւնն է։ Իրօք, հարցը բոլորովին այլ կերպարանք է ընդունում։ Եթէ որ «բա-

բերարը» բանուորին տար նրա աշխատածի-արտադրածի ամբողջ արժեքն, այն ժամանակ տարուայ վերջում նրա—«բարերարի» հարստութիւնը ոչ մի կոպեկով չէր աւելանայ. նոյնը կը մնար, ինչ էր տարուայ սկզբում, եթէ նոյն իսկ նրա մօտ բանէին հազար և տասնեակ հազար բանուորներ: Բայց այսպիսի բան աշխատանքատուին ձեռնտու չէ—նա ձգտում է աւելի հարստանալ, շատացնել իրեն կապիտալը. և որպէս զի այդ բանին կարողանայ հասնել, նա պէտք է իւր բանուորին աւելի քիչ տայ, քան բանուորի աշխատանքի արժեքն է: Ուրիշ խօսքով՝ աշխատավարձը չի ներկայանում որպէս գործադրած աշխատանքի լրիւ հաւասարակշիռը, բանուորը արտադրում է իրեն վճարած արժէքից աւելի—արտադրում է յաւելեալ արժեք, որի համար նա չի՝ վարձատրուած. և հէնց այդ յաւելեալ արժէքն է որ ստեղծում է բուրժուայի այժմեան կապիտալը: Ես այստեղ չեմ կարող աւելի խորը գնալ արդիւնաբերութեան գործողութիւնների (процессъ) այդ գաղտնիքների մէջ: Հրաւիրում եմ ձեր ուշադրութիւնը Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի վերայ, իսկ Մարքսը տնտեսագիտութեան շրջանում այն տեղն է բռնում, ինչ տեղ որ բռնում է Բօկլը պատմութեան և Դարվինը բնագիտութեան մէջ: Բաւական է.—ո՛չ թէ այսպէս կոչուած աշխատանքատուն է ներկայանում բանուորի բարերար, այլ բանուորն՝ այսպէս անուանուած աշխատանքատուի բարերարը, թէև ոչ կամաւոր բարերար, քանի որ նրա բարերարութիւնը նրան դարձնում է պրոլետար, վարձու ստրուկ այն մարդու համար, որին ինքը հարստացնում է: Սա ի՞նչ կարգ է. արդարացի՞ է արդեօք:

Միայն նա կարող է դրական պատասխան տալ

այս հարցին, ով անձնական շահ ունի: Իսկ բանուորները պէտք է ուրախանային իրենց աղքատութեան ու ճորտութեան վերայ, եթէ որ չձգտէին բոլոր ուժերով վերջ տալ այս դրութեան:

Աշխատավարձի յարաբերութիւնը—ժամանակակից դասակարգային իշխանութեան և դրանից առաջացած բոլոր չարիքների անկեան քարն է: Եւ հէնց այդ պատճառով էլ աշխատավարձի յարաբերութեան ոչնչացումը սոցիալդեմոկրատական շարժման ամենաազնիւ նպատակն է ներկայանում: Բանուորը պէտք է ստանայ իւր աշխատանքի լիակատար արդիւնքը. և նրա աշխատանքը պէտք է ունենայ ժամանակակից գիտութեամբ բարձրացրած հաւաքական աշխատանքի արդիւնաբերութիւն, ահա մեր նպատակը: Այսպիսով մենք չենք յարձակւում սեփականութեան վերայ և մտադիր չենք խորտակել այդ: Մեր ամբողջ ցանկացածը հետևեալն է. հնարաւորութիւն տալ, որ իւրաքանչիւր ոք սեփականութիւն ունենայ. բանուորի սեփականութիւնը պաշտպանել կապիտալի ճանկերից: Եւ այս բանին ցանկանում ենք հասնել ընկերակցութեամբ (accoujiaçia): Փոխանակ բանուորները մի երրորդ անձնաւորութեան համար բանելու, որը նրանց շահագործում և իրեն ստրուկն է դարձնում, թող բանեն իրենց համար, միասին, հաւասար իրաւունքներով և որպէս ազատ մարդ՝ ստանան իրենց աշխատանքի լիակատար արդիւնքը:

Չէ կարելի չխոստովանել կենտրոնացած արդիւնաբերութեան օգտակարութիւնը. մենք գիտենք, թէ ինչպէս միասին կատարած աշխատանքը աւելացնում է եկամուտը: Այդ պատճառով էլ հէնց, մենք ցանկանում ենք պահանջել ժամանակակից խոշոր արդիւնաբերութեան օգուտները և օժանդակելով ընդհանուր արդիւ-

նաբերութեան կենտրոնացմանն ու անհատի ազատ զարգացմանը՝ էլ աւելի շատացնել այդ օգուտները. բայց մենք ցանկանում ենք համաչափ կերպով բաժանել այդ օգուտները բոլորի վերայ և ոչնչացնել փոքրամասնութեան մենավաճառութիւնը։

Երբ արդիւնաբերութեան ներկայ եղանակը պահուի նոյն ձևով, ինչպէս որ է այժմս, նոյն դրութեան կը հասնենք, ինչպիսին որ հին Հռոմում էր, երբ բոլոր սեփականութիւնը վերջի վերջոյ հաւախմբուեց մի քանի տասնեակ մարդկանց ձեռքերում, իսկ բնակչութեան մնացած մասը դատապարտուեց սոսկալի ազքատութեան և կորստեան։ Օրինակ՝ ամբողջ հիւսիսային Աֆրիկան պատկանում էր երկու—երեք կալուածատէրերի, որոնց Ներոնը ամենանախնական ձևով զրկեց սեփականութիւնից՝ հրամայելով կորել նրանց գլուխները։ Եթէ ներկայումս էլ իրերի դրութիւնը կը հասնի այդպիսի ծայրայեղութիւնների, պէտք է ենթադրել, որ ժողովուրդը և ոչ թէ թագաւորը ձեռք կ'առնի այդպիսի էկսպրոպրիացիա (անշարժ կալուածները վերցնել՝ վճարելով դինը)։ Իսկ էկսպրոպրիացիան անխուսափելի կը դառնար։ Այսպիսի կարգերն անվերջ շարունակուել չեն կարող. դրանք հակասում են ընդհանուրի շահերին, դրանք երկար ժամանակ չեն հաշտուի հասարակութեան գոյութեան հետ՝ չնայած այն «ներդաշնակութեան», որի մասին մեզ քարոզում են և որը մենք, չար սոցիալիստներս ցանկանում ենք խախտել՝ «մտքեր յուզելով»։ Բայց որտեղ է այդ ներդաշնակութիւնը։ Այդ—պարոն բուրժուաների գլուխն է. հեքեաթներ են, որ ասում են դայեակները միամիտ ֆիլիստերներին *) և այն բանուորներին, որոնք դեռ չեն

*) Շարլոն բարոյականութեան պաշտպան, տէր։

տոլորել մտածելու։ Գերմանիայում, Բելգիայում, Անգլիայում, Ամերիկայում, մի խօսքով, այն բոլոր պետութիւններում, ուր տիրում է ներկայ արդիւնաբերութեան եղանակը, տեղի ունեցած գործադուլները, որոնց մասին ես յիշեցի, և որոնք կատարւում են առանց «առաջնորդների» օգնութեան, նոյն իսկ հաւարեա միշտ հակառակ նրանց ցանկութեան, և չնայած բանուորների կրած զգալի պարտութեան՝ միշտ էլ կրկնւում են —ահա այդ գործադուլները ամենալաւ պատասխան են ներկայանում ներդաշնակութեան մասին ասուող ֆրազների, ամենալաւ պատկեր (иллюстрація) ներդաշնակութեան մասին եղած ուսման համար։

Եւ այսպէս, մենք ցանկանում ենք խանգարել ներդաշնակութիւնը։ Պոչաւոր սուտ է դա. մենք ցանկանում ենք ներդաշնակութիւն ստեղծել. մենք ցանկանում ենք վերանորոգել ներկայ հասարակական կազմը, քանի որ դա մարդկանց շահերը թշնամական ընդհարման մէջ է դրել. քանի որ դա հակադրել է միմեանց ճնշողներին ու ճնշուողներին, շահագործողներին ու շահագործուողներին։ Այն ներդաշնակութիւնը, որին մենք ենք ձգտում, ընկերութեան մէջ է գտնւում. թող չլինի ոչ տէր, ոչ ծառայ, թող լինին ընկերներ, մարդիկ՝ միատեսակ իրաւունքներով ու պարտականութիւններով։ Ներդաշնակութիւնը հնարաւոր է միայն հաւասարութեան սկզբունքների վերայ հիմնած ընկերութեան մէջ։ Սա երևակայութիւն (фантазія) չէ. այդ գաղափարը հազարամեայ փորձերով արդէն ցոյց է տրուած։ Հազարաւոր տարիներ է, ինչ մենք ունինք ընկերութիւն, որի մէջն է արմատացած ամբողջ քաղաքակրթութիւնը—այդ ամուսնութիւնն է։ Մարդը և կինը ունեն ընդհանուր շա-

հեր։ Ես այստեղ վերլուծում եմ այս հարցը միայն տնտեսական տեսակէտից։ Ձեզնից որ և է մէկը, բարեկամներ, կարելի է ստիպուած է եղել տնտեսուհի պահել։ Նա, նշանակում է, փորձով իմացել է, որ՝ մի կողմ թողած բոլոր միւս անախորժութիւնները, նրա տնտեսական ծախքերն անհամեմատ շատացել են։ Ինչու՞ համար։ Տնտեսուհին ունի իւր սեփական շահը, որը ուղիղ հակասական է տանտիրոջ շահին։ Նրա առաջին գործն է լինում իր սեփական շահն ի նկատի առնել։ Այդպէս չէ կինը (ամուսին)։ «Մարդ և կին—երկուսն էլ մի սանրի կտաւ են», ասում է առածը։ Կինն էլ նոյն տնտեսական շահն ունի, ինչ որ մարդը. մարդու օգուտը՝ կնոջ օգուտն է. մարդու վնասը՝ կնոջ վնասն է։ Եթէ կինը խաբում է մարդին, ուրեմն իրեն է խաբում։ Մի խօսքով այստեղ գոյութիւն ունի շահերի ներդաշնակութիւն, և այդ ներդաշնակութեան մէջ են գտնում երկու մասերն էլ իրենց տնտեսական կռիւը։

Եւ հէնց պատճառն էլ այդ է, թէ ինչու՞ կնոջ հետ տնտեսութիւն անելն աւելի ածան է նստում, քան տնտեսուհու հետ։ Նոյն յարաբերութիւնն է նաև ժամանակակից բորժուական արդիւնաբերութեան մէջ։ Այսպէս կոչուած աշխատատուն ուրիշ շահեր ունի, բանուորն ուրիշ։ Բանուորի շահը պահանջում է, որ նա քիչ աշխատի այն աշխատավարձի համար, որ ստանում է, իսկ այսպէս անուանուած աշխատատուի շահը պահանջում է, որ նա որքան կարելի է շատ աշխատանք գցի այն վարձի համար, որ տալիս է—վճարում է։ Յետոյ՝ բանուորի շահը պահանջում է՝ ծախել իր աշխատանքը որքան կարելի է կարճ ժամանակով. աշխատանքատուի շահը՝ գնել այդ, որքան հնարաւոր է երկար ժամանակով. հետևաբար որքան կարելի է եր-

կարացնել բանուորական ժամանակը՝ հոգ չտանելով ամենևին, թէ բանուորը կարող է փչանալ ֆիզիքապէս և մտաւորապէս։ Մի խօսքով, թշնամական հակասական շահեր, կատարեալ անհերդաշնակութիւն՝ փոխանակ յայտարարած «ներդաշնակութեան»։

Թէ որքան գեղեցիկ կերպով բուրժուազիան հասկացել է—ես ոչ մի կերպ չեմ կարող չյիշել այս մասին,—շահերի իսկական ներդաշնակութեան տնտեսական օգուտները, երևում է Պարտներշիպեան շարլատանութիւնից, որը նա վաղուց չէ ինչ հնարել էր միայն մի նպատակով. ընկերական սկզբունքի արդիւնաւէտ ուժը կախման մէջ դնել կապիտալից։ Բանուորը խրախուսուած այն գաղափարով, թէ ինքն էլ մասնունի արդիւնքի—վաստակի մէջ, որը ծառայում է միայն որպէս խայծ (հրապուրիչ ուտելիք)՝ աւելի լարուած կերպով է աշխատում, քան սովորական պայմաններով վարձուած դէպքում. բացի այդ, երևակայելով թէ իրեն համար է աշխատում, կաշուից դուրս է գալիս միայն նրա համար, որ սովորական արդիւնքից բացի՝ այդպիսի լարուած գործունէութեամբ ձեռք բերած սովորականից վեր վաստակի առիւծի բաժինը ընկնի մարդասէր կապիտալիստին, որը կեղև է տալիս, միջուկը դասէր կապիտալիստին, որը կեղև է տալիս, միջուկը դասանալու համար։ Սակայն այդ թոռն ընկնող բանուորների թիւը շատ քիչ է. ապացոյց՝ որ մեր բանուորների մասսան հասկացել է արդէն, որ ընկերակցութեան սկզբունքի թշնամիները՝ ի չարն են գործ դնում այդ սկզբունքն իրենց սեփական օգտի համար։

Ես վերադառնում եմ այն մեղադրանքին, որ երբ թէ մենք ցանկանում ենք ոչնչացնել սեփականութիւնը, բայց միայն այդ մեղադրանքի մի ուրիշ ձևին. մենք ուզում ենք «բաժանել»։ Ի հարկէ, բաժանել այն մարդ-

կանց ստացուածքը, որոնք մի բան ունեն, այսինքն ունեւոր դասակարգերի։ Պէտք է ասել, որ վերջին ժամանակներում շատ անգամ պատահել է, որ պրոլետարիատը իւր իշխանութեան տակ է ձգել ունեւոր դասակարգերը, հետեւաբար յարմար առիթ ունէր բաժանելու, կամ եթէ առանց գեղեցկացնելու ասենք, յափշտակելու նրանց ունեցածը։ Բաւական է միայն յիշել փետրուարեան յեղափոխութիւնը, մարտի օրերը Վենայում, Բերլինում և ուրիշ տեղերում և վերջապէս կոմմունան։ Չնայած բոլոր միտումով տարածուած ստերին՝ փաստ է, որ երբէք սեփականութեանն աւելի մեծ յարգանքով չեն վերաբերուել, և եթէ մի կողմ թողնենք մեծ չափերով «բաժանումը», երբէք սեփականութեան դէմ այնքան քիչ յանցանք չի կատարուել, որքան այդ ճգնաժամերում։ Այս բանը երկու պատճառ ունի. նախ՝ պրոլետարիատը զանազանում է մարդկանց և պայմանները. նա գիտէ, եթէ սեփականութիւնը մի ձեռքից միւս ձեռքն անցնի, դրանով պայմանները չեն փոխուի։ Երկրորդ՝ յեղափոխական ժամանակներում մարդը յուզուած են լինում և ամենափչացած բնաւորութիւններն էլ իդէալական զգացմունքների կնիք են կրում։ Վերջինը յայտնի երևում է (որն, ի միջի այլոց, ապացուցուած է վիճակագրութեամբ) այն հանգամանքից, որ յեղափոխական ժամանակներում ոչ միայն սեփականութեան դէմ եղած յանցանքներն են պակասում, այլ ընդհանրապէս բոլոր ցած բնաւորութիւն ունեցող յանցանքները։

Փարիզում, փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, բանուորներն այնպիսի յարգանքով էին վերաբերում սեփականութեանը, որ իրենց գաղափարի սրբութիւնը պահպանած լինելու համար՝ գնդակահար

էին անում զողերին։ Ես ինքս 1848 թ. փետրուարի վերջում Տիւլրի-ի պատերի վերայ կաւիճով գրած հետեւեալ բառերը կարդացի «Les voleurs sont misò murt»— «զողերը կ'սպանուին»։ Այս բանը յիշեցնում է ինձ Գեոթէյից յետոյ՝ գերմանացի ամենամեծ բանաստեղծ Հենրիխ Հէյնէի գեղեցիկ սրախօսութիւնը. «Բուրժուաները,—մօտաւորապէս այսպէս էր գրում նա Հաուգսբուրգի «ընդհանուր թերթի» («Algemeine zeitung») մէջ զետեղած իւր մի նամակում,—նայում էին յուլիսեան գահի անկմանը շատ մեծ սառնասրտութեամբ. բայց երբ լսեցին, թէ զողերը պէտք է սպանուին, սարսափելի երկիւղի մէջ ընկան և պարոնայք Բոշիլդներն ու ճնացած խոշոր կապիտալիստները փախան Փարիզից, ուր այլ ևս իրենց անվտանգ չէին զգում»։ Այո, ահա նրանք։—Չեմ ուզում ասել զողերը, այլ «բաժանողները», իսկական բաժանողները, որոնք ընդհանուր ժողովրդական գատի երկիւղից քարացան. դրանք բանուորներ չեն, դրանք սոցիալիստներ չեն. դրանք պարոն կապիտալիստներն են։ Հետևապէս այդ մեղադրանքն էլ մենք դարձնում ենք մեր հակառակորդներին։

Թէ ինչպէս է տեղի ունենում աշխատաւորների «բաժանումն» իրենց բանուորների հետ, արդէն բացատրեցի։ Դրանից աւելի մեծ չափով և աւելի ակնյայտնի կերպով է կատարուում այդ բաժանումը բուրժոյում (բիրժայ). միայն որսը—թալանը ընկնողն այստեղ ոչ թէ բանուորն է լինում, այլ ստորին դասի քաղաքացին (мѣщанинъ), միջին դասակարգը՝ բառի ամենաընդարձակ նշանակութեամբ։ Ինչի՞ մէջ է կայանում այդ ընկերական հիմնարկութեան (грюндерство), որին ծառայում է հաճարեա ամբողջ մամուլը, խաբեբայութիւնը։ Նրա մէջ՝ որ ճարպիկ շահագէտները (спекулянтъ)

կարողանում են պլոկել հասարակութեանը։ Կարդացէք միայն «Լայպցիգեան ամենօրեայ թերթի», որը մեացած բոլոր բաներում անհամաձայն է մեր հայեացքներին, բօրսայական հաշիւները։ Այս իրօք գեղեցիկ յօդուածների մէջ բօրսայական շահադիտութիւնը (спекуляція) ընորոշւում է որպէս իսկական, բայց ժամանակակից գիշատիչ ասպետութիւն։ Բօրսայի շահադէտը բաց է անում իր ուռկանը և անբախտ ձկներն (пискарь) ընկնելով ուռկանի մէջ, նրա որսն են դառնում։

Իւրաքանչիւրը ձեզնից լսած կը լինի Ստուսսբէրգի մասին։ Ինչպէ՞ս է ձեռք բերել նա իւր միլիոնները։ Ի հարկէ, ոչ աշխատանքով, այլ իւր տաղանդով—ժուլիկութեամբ ուրիշ մարդկանց փողերը դրել է իւր գրպանը։ Բայց չէ՞ որ Ստուսսբէրգը՝ սեփականութեան մասին ներկայումս տիրող հասկացողութեամբ, յարգանքի արժանի մի մարդ է. պրուսական-թագաւորական ատիճանաւորներից մէկն օգնում է նրան նրա գործունէութեանց մէջ, հետևապէս նրա գործունէութեանց վերայ դրւում է պրուսական թագաւորութեան պետական կնիքը, որպէս զի կասկած չլինի, թէ այդպիսի ցանկութիւնը—սեր դէպի սեփականութիւնը համապատասխանում է ժամանակակից հասարակութեան և ժամանակակից պետութեան ոգուն։

Անցնենք այժմ այդ խոշոր «բաժանողներից», յայտնի տեսակի մանր բաժանողներին, որոնց դուք ճանաչում էք ձեր սեփական փորձով։ Խօսքս միջնորդների կամ ֆակտօրների մասին է։ Ջուլհակը հանքային սարերում աշխատում է ինքն ըստ ինքեան այնպիսի վարձով, որը նրան քաղցածութեան է դատապարտում. սակայն այդ վարձն էլ դեռ կրճատւում է որոշ տեսակի մարդկանց պատճառով, որոնք անհերեսութեամբ միջնորդ

են դառնում այդ բանուորների և վաճառականի կամ գործարանատէրի մէջ։ Ջուլհակը, որ օրական բանում է 12, 14, 16 ժամ, տարէց տարի աւելի և աւելի է աղքատանում, այն ինչ այդ միջնորդները, որոնց միակ աշխատանքն այն է, որ հում նիւթը վաճառականի մօտից ջուլհակի մօտ են ուղարկում և պատրաստածը՝ ջուլհակի մօտից վաճառականի մօտ, շատ քիչ բացառութեամբ միշտ էլ հաստատում են։ Ինչու՞ համար, որովհետև դրանք ցածրացնում են «բաժանումը»։ Ուրիշ օրինակ վերցնենք. դուք յիշում էք այն ժողովրդական ժողովը, որ մենք կազմեցինք Լայպցիգում մի քանի ամիս առաջ՝ ժողովրդական կառավարութիւն յայտարարելու համար։ Մեր բարեկամ Բեբելը ցոյց տուեց այդ ժամանակ, թէ ինչպէս քաղաքային հարկերը դուրս են բերւում գլխաւորապէս աղքատների—խեղճերի գրպաններից և գնում գլխաւորապէս յօգուտ հարուստների. իսկ այդ դուրս բերողներն էլ այն հարուստ դասակարգերն են, որոնց ձեռքին է գտնւում օրէնքը։ Մի այդպիսի բան էլ ցոյց տրուեցաւ նաև Կրիմմիտշաուէի համար, և եթէ մենք մանրամասն կերպով հետազօտենք այս ինդիրը, կը տեսնենք որ նոյն երևոյթը գոյութիւն ունի այն ամէն տեղերում, ուր կայ դասակարգային իշխանութիւն, ինչպէս պետութեան այնպէս էլ հասարակի մէջ։ Դասակարգային իշխանութեան հէնց ընութեան մէջ է գտնւում այն, որ նա գործ է դնում իւր իշխանութիւնը իւր մասնաւոր շահերի և իւր դասակարգի օգտին։ Հենց այդ պատճառով ելմենք կրուում ենք դասակարգային իշխանութեան դեմ, որը բոլոր սոցիալական չարիքների եւ արտցից առաջացած քաղաքական անկանոնութիւնների արմատն է։

Մի խօսքով՝ այդ մենք չենք, որ ցանկանում ենք

«բաժանել». այս մեղադրանքն էլ՝ յետ ենք դարձնում մեզ մեղադրողներին։ Մենք սկզբունքով հակառակորդ ենք ներկայանում «բաժանման», ինչ ձևի տակ էլ որ կատարուի այդ։ Սոցիալդեմոկրատիան ցանկանում է «բաժանողներին» զրկել իրենց արհեստից, «բաժանողներին», որոնք իրենց են վերցնում բանուորի աշխատանքի արդիւնքի մասը. «բաժանողներին», որոնք յափշտակում են մանր սեփականութիւնները. «բաժանողներին», որոնք հարկերի միջոցով քաշում են ժողովրդական ուժերը։ Այդ «բաժանողների» աւազակային խումբը (шайка), մորեխի նման խծռում են պետութեան, համայնքի, բօրսայի, արդիւնաբերութեան և վաճառականութեան (չէ՞ որ վաճառականութիւնն էլ այս շրջանի մէջ է մտնում) մէջ եղած աշխատանքի պտուղները, մենք ցանկանում ենք պաշտպանել հասարակութիւնը, աշխատանքը։ Մենք ցանկանում ենք պաշտպանել սեփականութիւնը։

Մի բան էլ. ինչպէ՞ս են ներկայացնում իրենց մեր հակառակորդները հէնց այս «բաժանումը», որն այդպէս յամառութեամբ աշխատում են մեզ վրայ ձգել։

Մի՞թէ նրանք բանուորներին այնքան պարզամիտ են համարում, որ կարծում են, թէ բանուորը իր դրութիւնը բարուաքած կը լինէր, եթէ պետութիւնը ձեռնարկէր բաժանել ստացուածքները անհատների թւի համեմատ։ Քսան հինգ տարի է արդէն, որ ես մասնակցում եմ սոցիալդեմոկրատիական շարժման մէջ և դեռ մեր ընկերներից ոչ մէկին չեմ հանդիպել, որն այդպիսի ողորմելի տգիտութիւն ցոյց տար։ Իւրաքանչիւր բանուոր գիտէ. եթէ արդիւնաբերութեան ժամանակակից եղանակը շարունակուի մնալ և մենք այդ դէպքում հաւասար մասերի բաժանենք բոլոր գոյութիւն

ունեցող արժէքները—անշարժ կալուածներն ու շարժական կապիտալը—անհատների թւի համեմատ, հասարակութեան էութիւնն այս բանից իսկի՛ էլ չի փոխուի. դրանով հետևանքները հեռացրած կը լինենք իսկոյն, բայց պատճառները կը մնան նախկին ուժի մէջ և անպայման առաջ կը բերեն նախկին հետևանքները։

Եթէ բաժանումը տեղի ունենայ և հաւասարութիւնը վերականգնուի մեքենաբար, այն ժամանակ այդ հաւասարութիւնը՝ գոյութիւն ունեցող տնտեսական օրէնքների ազդեցութեամբ, նորից կ'ոչնչանայ օրգանական կերպով և երկար չի տևի, ինչ անհաւասարութիւնը յամառութեամբ իւր իրաւունքների մէջ կը մտնի կրկին։ Մենք էլ յանկարծ նախկին դրութեան մէջ կը յայտնուէինք և ստիպուած կը լինէինք նորից «բաժանելու»։ Ո՞չ, այդպիսի յիմարութիւնները չեն կարող ծագել սոցիալդեմոկրատի գլխում։ Սոցիալդեմոկրատիան հասարակութեան վերայ նայում է, որպէս կենդանի օրգանիզմի վերայ և ոչ որպէս մեռած մեխանիզմի վերայ. այնպիսի օրգանիզմի, որն ամեն մի անհատական, կենդանական կամ բուսական օրգանիզմի նման ենթակայ է մշտական փոփոխութեան և որն աւելի ցածր դրութիւնից զարգանում ու աւելի բարձր դրութեան է հասնում. միայն այն զանազանութեամբ, որ հաւաքական օրգանիզմը, որին մենք հասարակութիւն անունն ենք տալիս, անմահ է, յաւիտենական է և բոլոր ճգնաժամների (кризисъ) միջից էլ, որոնք թանձրամիտ ու փոքրոգի մարդկանց կարծիքով նրան մահացու հարուած պիտի հասցնէին, դուրս է գալիս վերանորոգուած և թարմ ուժերով։ Մենք ոչ թէ մեքենական, այլ օրգանական փոփոխութիւնների ենք ձգտում։ Վարձու աշխատանքի ձևը—սիստեմը, որի վրայ հիմնուած է ժա-

մանակակից հասարակութիւնը իւր անարդարութիւններով, պէտք է ոչնչացնել և նրա տեղը դնել ընկերական աշխատանքի սիստեմը, որը ապահովում է իւրաքանչիւրին իրեն աշխատանքի արդիւնքը, և դրանով արգելք դնել կապիտալին՝ աշխատանքը շահագործելու: Մասնաւոր խոշոր կապիտալներ հաւաքել—դիզել՝ կարելի է միմիայն այդ շահագործութեան միջոցով: Այս պատճառով էլ՝ գոյութիւն ունեցող մասնաւոր կապիտալների էկսպրոպրիացիան անհրաժեշտութիւն չի ներկայանում, արդիւնաբերական ընկերութիւնները (ассоціація) որոնց հետ վաճառականութեան բոլոր շրջանները պատած՝ սպառողական ընկերութիւնները ձեռք ձեռքի տուած պէտք է առաջ գնան—աստիճանաբար կուլ կը տան մասնաւոր կապիտալը և այն ժամանակ ոչ մի անհրաժեշտութիւն չի լինի բռնի խմբական—մասսայական էքսպրոպրիացիայի: Պարոն կապիտալիստներն այն ժամանակ պէտք է մտնեն ընկերութեան մէջ. հակառակ դէպքում՝ նրանց կապիտալը կը մնայ իրրև մեռած տարր և օգուտ չի բերի ոչ իրենց, ոչ էլ հասարակութեանը: Այնպէս որ այդ դէպքում, ի հարկէ, թէ նրանց սեփական շահի և թէ հասարակութեան շահի տեսակէտից՝ օգտաւէտ կը լինի, եթէ օրէնսդրութիւնը միջոցներ ձեռնարկէ այդպիսի անմիտ ընդդիմութեան դէմ, միջոցներ, որոնք ներկայումս ձեռք են առնուում շռայլող—փչացնողների, սակարամիտների, մի խօսքով անխելահասների դէմ: Բայց ինչ որ էլ չլինի, հէնց որ հասարակութիւնը արդիւնաբերութեան և սպառողութեան վերաբերեալ, հետևապէս արհեստագիտութեան և վաճառականութեան մէջ կազմակերպուած կը լինի ընկերական հիմունքների վերայ, մասնաւոր կապիտալի կենսական ջիղը կտրած կը լինի և կապի-

տալը կը մեռնի քշտած *) ծառի նման, իսկ ստեղծող աշխատանքը կ'սկսի այդ ժամանակ նոր և նոր արժէքներ ստեղծել և կը կրկնապատկի ու կը տասնապատկի մեռնող կապիտալը:

Իսկ մեզ ասում են—այն էլ գերմանական քաղաքատնտեսները, որոց մէջ կան նոյն իսկ գիտնականներ, ինչպէս ուսուցչապետ Բ՞շերը Լայպցիգից,—նոյն իսկ հաստատում են, որ արժէք ստեղծելու համար՝ աշխատանքը միակ գործօն չէ ներկայանում. կան երկու ուրիշ գործօններ. բնութեան ուժերը և կապիտալը: Այս տեսութիւնը պարզ ապացոյց է, թէ դասակարգային նախապաշարումները ո՞ր աստիճանի սահմանափակ և անազնիւ են դարձնում մարդկանց և որքան քիչ են նոյնանում ուսումնականութիւնն ու մտածողութիւնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մենք առանց բնութեան ուժերի՝ չենք կարող աշխատել. հէնց ինքն աշխատանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնութեան ուժերից օգտուելը: Առանց հողի, որի վերայ կանգնում եմ, առանց օդի, որով շնչում եմ, չեմ կարող մատս բարձրացնել. բնութեան ուժերն աշխատանքի անհրաժեշտ պայմաններն են. բայց առանց աշխատանքի այդ ուժերն անկարող են ստեղծել ընդհանրական արժէքներ (այնպիսի արժէք—գին ունեցող իրեր, որոնք պէտքական են բոլորին), և միայն շնորհիւ աշխատանքի նրանք դառնում են անհրաժեշտ արդիւնաբերութեան համար: Ուստի և բոլորովին անհիմն է նրանց աշխատանքի շարքում դասել՝

*) Մեզանում ծառը քշտում են, որպէս զի աւելի լաւ ածիսակայն կայ մի ուրիշ տեսակ քշտել էլ, որ գործ են դնում ամերիկական ագարակապանները. կլպում են ծառի կեղևը մարդաչափ բարձրութեամբ և ծառը չորանում—մեռնում է. և այս բանն անում են, անտառներում, որպէս զի հողը մշակեն. չէ՞ որ մեռած ծառը նիւթ չի ծծի հողից:

իբրև արդիւնաբերական գործօն։ Սակայն մենք այստեղ գործ ունինք աւելի շուտ սխալ արտայայտութեան, քան թէ միտումաւոր-տենդենցիոզ անճշտութեան հետ, որի վրայ մենք անշուշտ կարող ենք մատնանիշ անել՝ առաջարկուած երրորդ գործօնը—կապիտալը նայելիս։ Կապիտալն, ի հարկէ, օգնում է արդիւնաբերութեանը, նպաստում նաև նրա զարգացմանը, բայց քանի որ կապիտալը ներկայացնում է դիզած աշխատանք՝ կամ աւելի ճիշտ՝ աշխատանքի դիզած արդիւնք, ուստի և չի կարելի նրան դնել աշխատանքի շարքում՝ իբրև ինքնորոյն գործօն նա միայն միանում է «աշխատանք» գործօնի հետ և վերջինիս մի մասն է կազմում։ Ամենահասարակ օրավարձով բանող բանուորի ամենաանշան աշխատանքի մէջ, ի միջի այլոց, գտնւում է հազարաւոր տարիների կուտակուած քաղաքակրթական աշխատանքի. և այդ կապիտալը, որը պարոն քաղաքատնտեսները չեն հաշուում իբրև արդիւնաբերութեան գործօն, որովհետև այդ բանի կարիքը չեն զգում, այո, այդ կապիտալն անվերջ նշանակալից է արդիւնաբերութեան համար, քան թէ սովորական կապիտալը։

Որպէս զի աւելի պարզ ցոյց տամ, որ իսկապէս աշխատանքն է կապիտալ ստեղծում և որ կապիտալն առանց աշխատանքի ոչինչ է և ամեն բանով պարտական աշխատանքին, երևակայենք, թէ մի սարսափելի ջրհեղեղ է պատահել, որը սրբել է երկրի երեսից բոլոր բանուորներին, գլխաւորապէս չար սոցիալդեմոկրատներին. իսկ պարոն բուրժուաներն իրենց բոլոր կապիտալներով, գործարանների շէնքերով, մեքենաներով, փառաւոր պալատներով և թանկագին իրերով ազատ են մնացել այդ ջրհեղեղից—չեն մնասուել։

Ի՞նչ կը լինէր հետևանքը. կամ իրենք կապիտալիստները պէտք է սկսէին աշխատել, կամ յանձն առնէին սովից մեռնել ոսկիների մէջ, յունական առասպելի մէջ յիշատակուած Թագաւորի (Միդաս) նման, որը նոյնպէս, վիրաւորական չլինի, էշի ականջներ ունէր։ Վերցնենք այժմ հակառակ դէպքը. դիցուք ջրհեղեղը ջնջէր երկրի երեսից բոլոր կապիտալիստներին—իհարկէ, ես նոյն իսկ հասարակ ենթադրութեան մէջ էլ նրանց ոչ մի վնաս չեմ ցանկանայ. նրանց կարելի է տեղափոխել որ և է աստղի վերայ (օրինակ Վեներայի վերայ), որտեղ Դանտէն տեղաւորեց իւր մեռնող հոգիներին—այսպէս, ենթադրենք կապիտալիստներն իրենց բոլոր կապիտալներով չքացան երկրի երեսից, բանուորները մնացին առանց մեքենաների, առանց որ և է կապիտալի, առանց գործարանների՝ ունենալով իրենց հետ այնքան ուտելու պաշար, որ բաւականանայ նրանց մինչև հետևեալ հունձը։ Ի՞նչ կը լինէր հետևանքը։ Բանուորներն իրենց համար գործիքներ կը շինէին, տներ կը շինէին, կը վարէին հողը, փոսեր կը փորէին հանքերում, և մի քանի տարուայ ընթացքում ոչնչացած կապիտալը նորից կը վերականգնէր և չքացած կը լիներ ջրհեղեղի վերջին հետքն անգամ. բանուորներն անհամեմատ բախտաւոր կ՚ապրէին, քան ապրում էին առաջ, ազատուած կը լինէին իրենց առաջուան տէրերից, կ՚ունենային կապիտալ՝ առանց կապիտալիստների դասակարգի։ Ի հարկէ, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ շնորհիւ բնութեան որ և է պատահարի, կամ ուրիշ պատահարի՝ բուրժուազեան ոչնչացած լինէր այն բոլորի հետ միասին, ինչ որ իրեն է պատկանում, կենդանի մնացածներից ոչ մէկն այնքան միամիտ չէր լինի, որ նրան—բուրժուազիային նորից արհեստականօրէն կեանք տար։ Հերի՛ք է.

այս ենթադրական օրինակը պէտք էր միայն ցոյց տալու, թէ բանուորը կապիտալիստի կարիք չի զգում և առանց նրան՝ իրեն շատ աւելի լաւ կը զգար. իսկ կապիտալիստը զգում է բանուորների կարիք և առանց դրանց չի կարող գոյութիւն ունենալ՝ գոնէ որպէս կապիտալիստ։ Մէկ էլ կրկնում եմ. մենք չենք ցանկանում «բաժանել» և հեռու ենք այն բանից, որ ցանկանանք բաժանել կապիտալիստների հետ. մենք վճռականապէս ուզում ենք խանդարել, որ կապիտալիստները չբաժանեն բանուորների հետ. իսկ այս բանին ցանկանում ենք հասնել՝ ընդհանուր ընկերական աշխատանք մացնելով։

Կարելի՞ է արդեօք այս ձգտումը ցնորական (утопическій) համարել. մի՞թէ փորձով արդէն ցոյց չի տուած, թէ ինչպէս արդիւնաբերութեան և վաճառականութեան մէջ ընկերական սկզբունքը գործնականապէս իրականութիւն է գտել։ Այդ ձևի ընդհանուր հաստատութիւնը փողի հարց է, ուրիշ ոչինչ։ Իսկ փողի հարցը իւր լուծումն պէտք է ստանայ բարի կամքի հարցով։ Ինչպէս յայտնի է, արդիւնաբերական ընկերութիւնների համար Լասսալը պահանջում էր 100 միլիոն տալերի *) պետական օժանդակութիւն, որով և կատաղութեան աղաղակներ առաջացրեց բուրժուազիայի մէջ, որի աչքերի առաջ ընդհանուր մանկութիւն պատկերացաւ, հէնց որ բաւարարութիւն տրուէր այդ պահանջին։ Բաւական է Լասսալի ցոյց տուած գումարը թէ ոչ, չեմ ուզում այժմ պարզել—յամենայն դէպս դա մի աննշան դատարկ բան է՝ համեմատած այն միլիարդների հետ, որոնք դուրս են շպրտում լու-

*) Տալերը=1 ր. 50 կ.

սամուտներից անարդիւնաւէտ, քաղաքակրթութեան վնասակար և բարօրութիւն քայքայող նպատակների համար։ Նայեցէք, օրինակ, մշտական զօրքի ահագին բիւջէին. այն զօրքի, որը ծառայում է միայն պաշտպանելու գոյութիւն ունեցող պետական և հասարակական ի չարը գործ դրուող դէպքերը, և պատկերացրէք այն հազար միլիոնները, որ կլանեց վերջին պատերազմը, որն առաջ եկաւ սոցիալիզմից ունեցած երկիւղի պատճառով։ Իրօք, ինչ էլ չարժենայ հասարակական վերածնութիւնը, աւելի լաւ պայմանների մատցնելն այնքան չի արժենայ, որքան արժենում է մեր այժմեան պայմանների պահպանութիւնը։

Շարունակենք։

Մեզ մեղադրում են կոմմունիզմի մէջ, որը նոյնանում է նախորդ մեղադրանքին. ես թռուցիկ կերպով կը շօշափեմ այս խնդիրը։ Ի՞նչ են ներկայացնում իրենց մեր հակառակորդները կոմմունիզմ բառի տակ։ Այն, որ ծոյլերը և նրանք, ովքեր չեն աշխատում, ցանկանում են ապրել ընդհանուրի հաշուով։ Այո՛, բարեկամներ. այդ կոմմունիզմը գոյութիւն ունի ներկայումս. դա պետութեան և հասարակութեան հիմնական սկզբունքն է. և հենց դրա դէմ է ուղղուած ամբողջ սոցիալ-դեմոկրատական շարժումը։ Իրօք, կոմմունիզմը բոլորովին ուրիշ, նոյն իսկ հակառակ նշանակութիւն ունի, ես ասում եմ իրօք, որովհետև իրենք կոմմունիստները կոմմունիզմն այս մտքով են հասկանում։ Ո՛չ, կոմմունիզմը չի նշանակում աշխատաւորների շահագործուելը ծոյլերից, բանողներինը՝ չբանողներից. կոմմունիզմը նշանակում է, որ մասնաւոր շահերը պէտք է ենթարկուեն ընդհանուր շահերին. անհատականութեան ազատութիւնն ընկերակցութեան մէջ. իսկ

ինչ վերաբերում է մասնաւորապէս սեփականութեան, կոմմունիզմը ձգտում է սեփականութիւնը ընդհանուրի բաժին դարձնել. հետևապէս ոչ ոչնչացումն սեփականութեան—քանի դեռ ապրում են մարդիկ, գոյութիւն կունենայ նաև սեփականութիւնը,—այլ սեփականութեան ընդհանրացումն, որով իւրաքանչիւր ոք սեփականութեան իրաւունք կունենայ, այն ինչ այդ իրաւունքն այժմ պատկանում է ընակչութեան միայն մի աննշան մասին։ Ահա մի միայն այս մտքով, ճիշտ ըմբռնեցէք այս գաղափարը, մենք, ի հարկէ, ձգտում ենք կոմմունիզմի։

Հետևեալ մեղադրանքի համար, որ ձգում են մեր վրայ, կը բաւականանամ մի քանի նկատողութիւններ միայն անելով։ Մեզ անուանում են «ժթ. դարու բարբարոսներ», իբր թէ մենք ձգտում ենք խորտակել «քաղաքակրթութիւնը», իբրև թէ սոցիալ-դեմոկրատիայի յաղթութիւնը՝ «քաղաքակրթութեան (цивилизація) ոչնչացնելու» մէջն է։ Այն կուսակցութիւնը, որի ծրագիրը ձրի ժողովուրդական կրթութիւն է պահանջում և առհասարակ ձրի մասնակցութիւն—յաճախումն բոլոր կրթական և դաստիարակական հիմնարկութիւնների մէջ, այդ կուսակցութիւնը չի վասուի այդպիսի մեղադրանքից, թէև որոշ տեսակէտից մեղաւորութիւնը մեզ վրայ ենք վերցնում։ Այո, մենք ուզում ենք խորտակել այն, ինչ որ մեր հակառակորդները «լուսաւորութիւն», «քաղաքակրթութիւն» են անուանում. մենք ցանկանում ենք խորտակել սարկութիւնն ու ճնշումը. մենք ցանկանում ենք խորտակել մարդկանց մէջ ցանած տգիտութեան և երկպառակութեան սերմերը, մենք ցանկանում ենք խորտակել ագիտութիւնը, մտաւոր խաւարը, որին մատնուած է մեր եղբայրների առա-

գին մեծամասնութիւնը։ Այո, պարոն բուրժուաներ, տգիտութիւնը մենք ցանկանում ենք խորտակել, մենք, ձեր «լուսաւորութեան—քաղաքակրթութեան» թշնամիները։ Ձեր քաղաքակրթութիւնը խաղաքակրութեան հէնց հակասութիւնն է. դուք կարող էք ազատել ձեր այդ քաղաքակրթութիւնը՝ ժողովրդին ագիտութեան դատապարտելով, ամօթալի կերպով թաքցնելով նրանից իսկական քաղաքակրթութեան գանձերը, փակելով նրա առաջ կրթութեան տաճարի դռները, ահա մեր ձգտումը։ Գիտութիւնը, որը դուք մի քանի ընտրեալների մենաշնորհ էք դարձել, և որոնց մի կտոր հաց անգամ չէք տալ, հէնց որ նա—այդ գիտութիւնը դադարի շոյել ձեր քմահաճութիւններն ու փայփայել *) ձեր շահասիրութիւնները— ահա այդ գիտութիւնն մեզ ցանկանում ենք դարձնել բոլորի սեփականութիւն. իսկ այս բանը կ'իրականանայ այն ժամանակ, երբ առաջ կը գայ իսկական ժողովրդական դպրանոցների սիստեմը—որը չի ներկայանայ որպէս կենդանիների վարժեցնող մի հիմնարկութիւն, ինչպէս են ներկայ ժողովրդական դպրանոցները, որոնք ծաղր են այդ կոչմանը, և ուր ուսուցիչները ֆիզիկապէս, իսկ աշակերտները մտաւորապէս ստիպուած են քաղցից մեռնել. ուր աղքատների երեխաների առաջ շպրտում են ողորմելի փշրանքներ, որոնք մտքի սնունդութեան համար չափազանց անբաւարար են, և ուր գիտութիւնն ամենա-

*) Երբ ես այս ճառն ասում էի, չգիտէի դեռ, որ Ֆեյերբախը սովամահ լինելու էր դատապարտուած։ Մի կողմից՝ քաղցից մեռնող Ֆեյերբախը, իսկ միւս կողմից ազատամիտ բուրժուազիայի կուռք՝ խմաստակ «ստոր, անպիտան քահանայ Դոլլինգերիուսը»—այս հերիք է մեր բուրժուազական աշխարհի «կրթութիւնը» բնորոշելու համար։

փոքր չափով է տրուում—ոչ. մենք ցանկանում ենք վրա-
ցնել ժողովրդական դպրանոցների եղանակը՝ այդ բա-
ռի իսկական նշանակութեամբ. դպրանոցներ ժողովրդի
համար, որոնք բոլոր երեխաներին պէտք է կրթութիւն
մատակարարեն ամենամեծ չափով. որոնք պէտք է օ-
ժանդակեն իւրաքանչիւր մանուկի բոլոր ընդունակու-
թիւնների առաջ գալուն ու զարգանալուն և ոչ, ինչ-
պէս այժմ է, ուր երեխաները վերջացնում են իրենց
կրթութիւնն այնպիսի հասակում, երբ իսկպէս ասած
դեռ նոր պէտք է սկսուէր այդ կրթութիւնը։ Սոցիա-
լիզմը «թշնամի է քաղաքակրթութեան». չլինի՞ այն
պատճառով. որ հնարաւորութիւն է տալիս իւրաքան-
չիւր տաղանդի զարգանալուն։ Քաղաքակրթական ա-
ռաջադիմութեան որպիսի զօրեղ խթան է գտնուում հէնց
միմիայն իսկական ժողովրդական կրթութեան փաստի
մէջ։ Տաղանդները հաւասարաչափ կերպով բաժանուած
են մարդկանց մէջ— այս ճշմարտութիւն է, որի մա-
սին չի կասկածում և՛ գիտութիւնը, որով պէտք է որ
մենք առաջնորդուենք, որովհետև նա է սոցիալիստա-
կան և դեմոկրատական աշխարհայեացքների հիմքը,
բայց ժամանակակից հասարակութիւնը միմիայն մի
աննշան փոքրամասնութեան է թոյլ տալիս զարգա-
ցնել իրենց ընդունակութիւնները և հէնց այդ փոքրա-
մասնութեանն էլ, սակաւ բացառութեամբ, նա տալիս
է միակողմանի, աղաւաղուած կրթութիւն։ Ներկայիս
պայմանների պատճառով տաղանդների մի ահագին
մեծամասնութիւնը խեղդուում է։ Յաճախ զարմանում
են, թէ ինչո՞ւ որոշ ժամանակաշրջանում բաւական
շատ յայտնի մարդիկ են երևան գալիս։ Այդ—հէնց
այն ժամանակաշրջաններն են, ուր քնած տաղանդնե-
րին հնարաւորութիւն է տրուում զարթնելու և գործ

կատարելու։ Առանձնապէս այդ բանը պատահում է յե-
ղափոխական ժամանակաշրջաններում, երբ նոր գաղա-
փարները և նոր կարգերը պաշտպանելու համար՝ նոր
ուժերի պահանջ է զգացուում։ Նայեցէք, օրինակ, այն
պետական մեծ մարդկանց, ճարտասանների, զօրա-
վարների ահագին խմբին, որոնք ֆրանսիական յեղա-
փոխութեան փառքն ու պատիւն են կազմում։ Այդպի-
սի ժամանակներում տաղանդները աւելի շատ չեն,
քան թէ սովորական ժամանակներում, բայց—քաղա-
քատնտեսական արտայայտութեամբ ասեմ,—տաղանդ-
ների աւելի մեծ պահանջ է զգացուում։ Դէպքն ստեղ-
ծում է ոչ միայն գողեր, այլ նաև «մեծ մարդիկ»։
«Մեծ մարդը» նոյն սովորական մարդն է, որը «մեծ»
է դառնում դէպքի բերմամբ։ Այս բոլորն ասում եմ
միմիայն ցոյց տալու համար, թէ ինչպէս անվերջ կեր-
պով հարկաւոր է օժանդակել մեր քաղաքակրթութեան
զարգացմանը, եթէ հասարակութիւնը երբևիցէ իրեն
ամենաբարձր խնդիրը կը համարէ, որքան կարելի է,
զարգացնել բոլորի տաղանդները, հետևաբար, ամենա-
բարձր կրթութիւն բոլորի համար։ Մենք ցանկանում
ենք ազատել գիտութիւնը և մաստչեի դարձնել այն՝
բոլորին. նա էլ չպէտք է շղթաների մէջ մնայ կապ-
կպուած և նրան ծառայողներն այլևս չպէտք է ազա-
ւութեան և անառակութեան դատապարտուեն։ Այո,
մենք ցանկանում ենք խորտակել ձեր քաղաքակրթու-
թիւնը—խորտակել՝ որովհետև նա թշնամի է իսկական
քաղաքակրթութեան, որովհետև նա հաշտուել չի կա-
րող իսկական քաղաքակրթութեան հետ, որովհետև նա
բռնի կերպով ստիպում է գիտութեանը ծախուել հարս-
տութեանը և իշխանութեանը. որովհետև նա, հիմնուած
լինելով անարդարութեան վերայ՝ ուղղակի անբարոյա-

կան է. և դուք գիտութեան անառակութեանը միայ-
ոէք կնոջ անուակութիւնը,—կնոջ անառակութիւնը,
մեր կեղծ քաղաքակրթութեան ամենազզուելի բիծը։

Եւ պոռնկութեան հասարակութեան ներկայացու-
ցիչները անամօթաբար մեղադրում են մեզ—և այդ նը-
բանց մեր դէմ ուղղած յետագայ առարկութիւնն է, որ
իբր թէ մենք ցանկանում ենք ոչնչացնել ընտանիքը,
բազմակնութիւն և «ազատ սէր» մացնել։ Իրօք—ազատ
սէր՝ այո, ցանկանում ենք. մենք ցանկանում ենք ա-
զատել սէրն այն շղթաներից, որոնցով կապկպել է նը-
բան ժամանակակից հասարակութիւնը. բայց ինչ վե-
բաբերում է մեր հակառակորդների առաջ բերած բազ-
մակնութեան, ընտանիքի ոչնչացնելուն, դրանով նրանք
իրենց պատկերն են տեսնում հայելու մէջ։ Նրանք մե-
ղադրում են մեզ իրենց սեփական յանցանքների մէջ։
Հեռու լինելով բազմակնութեան ձգտելուց՝ մենք ցան-
կանում ենք ոչնչացնել ներկայումս տիրող բազմակնու-
թիւնը։ Հեռու լինելով ընտանիքը ոչնչացնելու ցան-
կութիւնից՝ մենք մեզ նպատակ ենք դրել աղնուացնել
ընտանիքը, որն այժմ ցած և ցած է ընկնում և իւր
մաքրութեամբ անհասանելի իդէալ համարւում ամբոխի
համար և մենք ցանկանում ենք հասնել այն բանին, որ
նա իւր օրինութիւնը թափէ բոլորի վերայ։ Շատ-շատ
ուրախ եմ, որ այս ժողովում տեսնում եմ հէնց կա-
նանց էլ. դա ապացոյց է, որ կանայք հասկացել են,
թէ որքան մօտ է վերաբերում նրանց սոցիալական
շարժումը, թէ որքան մեծ շահ ունին նրանք մեր
սկզբունքների յաղթանակից։ Ներկայումս շատ են խո-
սում այսպէս կոչուած կանանց հարցի մասին։ Մեզ հա-
մար առանձին կանանց հարց չկայ և չի էլ կարող լի-
նել, որովհետև մարդկանց շահերը համերաշխ են դէպ

միմիանց։ Կանանց հարցը մեծ սոցիալական հարցի մի
մասն է. վերջինիս հետ նա էլ կը վճռուի, իսկ առանց
սրան՝ երբէք։ Ով ձգտում է կնոջ ազատագրութեան
հարցի՝ չվճռելով կռուել յանուն ընդհանուր սոցիալական
ազատագրութեան՝ նա մի անյուսալի խճճուած աշխա-
տանքի է ձեռնարկում։ Սակայն նա, ով կռուի է ել-
նում ընդհանուր սոցիալական ազատագրութեան հա-
մար, կռուում է միևնոյն ժամանակ նաև կնոջ ազատա-
գրութեան համար։ Եւ իրօք, միմիայն կնոջ դրութիւնը
ժամանակակից հասարակութեան մէջ հերիք կը լինէր
արդարացնելու համար սոցիալական շարժումը և մա-
հու դատավճիռ կարդալու այն հասարակութեանը, որն
այդպիսի պայմաններ է առաջ բերում։ Ո՞ւր է այն
«ընտանիքի սրբութիւնը», որի մասին մեր հակառա-
կորդներն առակներ են ասում։ Չ'որոնե՞նք արդեօք այդ
այն հարիւր հազարաւոր պոռնիկների մէջ, որոնք լիքն
են թէ մեծ և թէ փոքր քաղաքների փողոցներում և
ծախում են իրենց մարմինը նրան, ով ամենից շատ է
վճարում այդ մարմնի համար։ Միմիայն Բերլինում
20,000 պոռնիկ են հաշուում և Բերլինը միւս քաղաք-
ներից «անբարոյական» չէ։ Չէ՞ որ Գերմանիայում, Անգ-
լիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում—ամեն տեղ, ուր
գոյութիւն ունի դասակարգային հակասութիւն, ուր
աղքատութեան և հարստութեան մէջ մեծ խորխորատ
կայ, ուր մարդկանց մարդկանցով շահագործուելը սո-
ռոութիւն և օրէնք է դարձած, այդ ամեն տեղերում
մեր տէրի առաջ կանգնած է անառականոցային չարի-
քը։ Պոռնկանոցը ոչ տեղային, ոչ էլ ազգային երևոյթ
է—ոչ մի ազգ իրաւունք չունի փարիսեցու նման լուալ
իւր ձեռքերը և ասել. «Փառք Աստուծոյ, ես այնպէս վատ
չեմ, ինչպէս միւս ազգերն են»։ Պոռնկանոցը տիրող

պայմանների անհրաժեշտ հետեւանք է ներկայանում. նա բուրժուազական ամուսնութեան լրացուցիչ մասն է, նրա զզուելի երկուորեակն է, նա ներկայանում է որպէս ընդհանուր հասարակական հիմնարկութիւն, ուստի և ծիծաղում է այն ամեն աշխատանքների վերայ, որոնք գործ են դրուում վերացնելու նրան ժամանակակից հասարակութեան միջից։ Շատ-շատ նա թոյլ է տալիս բարոյականութեան կեղծ պաշտպան ոստիկանութեանը քշել իրեն հրապարակից դէպի հեռաւոր փողոցներ։ Քանի դեռ հարիւր հազարաւոր աղջիկներ ուրիշ ելք չեն ունենալ, եթէ ոչ կամ քաղցից մեռնել և կամ ծախել իրենց փողով, պոռնկանոցը գոյութիւն կ'ունենայ։ Նա կ'անյայտանայ միայն այն ժամանակ, երբ իւրաքանչիւր մարդու հնարաւորութիւն կը տրուի ազնիւ կերպով ապրելու, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ բարենորոգուին ժամանակակից հասարակութիւնն ու արդիւնաբերութեան ժամանակակից եղանակը։ Ամենընկած պոռնիկ կինն արժանի է մեր կարեկցութեան և համակրանքին. նրա պատմութիւնը մի հասարակական ողբերգութիւն է, որ ցնցում է նրան, ով իր կրծքում մարդկային սիրտ է կրում, և ով կարողանում է կարդալ մարդկային սիրտը։ Վատթար կրթութիւնը, վատ օրինակը, ընտանիքից զրկուելը, քաղցը—ահա թէ ինչն է ձգում նրան պոռնկանոց, ով կը համարձակուի քար ձգել այդ ընկած արարածների վերայ. հասարակութեան այդ անբախտ զոհերի վերայ։ Սակայն ի՞նչ է ներկայացնում պոռնկանոցը, եթէ ոչ բազմակնութիւն. բազմակնութիւն՝ ամենաանբարոյական, ամենակոպիտ ձևով։ Եւ մեզ մեղադրում են բազմակնութիւն մտցնել ցանկանալու մէջ։ Եթէ մենք ցանկանայինք այդ բանը, կռիւ չէինք յայտարարի ժամանակակից հասարակու-

թեան մէջ։ Արդեօք ամուսնութիւնը պոռնկանոց չէ՞ դարձել շնորհիւ կապիտալի։ Հիմնուած է նա արդեօք ընդհանրապէս սիրոյ կամ ազատ կապակցութեան վերայ։ Արդեօք դրա մէջ վճռական դեր խաղացողը վայրկեանը, սեփականութիւնը չէ՞։ Ամուսնութիւն սիրուց բղխած—չի արգելւում արդեօք դա բարձր դասակարգերի մէջ։ Ճշտութեամբ չի՞ չափւում այդտեղ երկու կողմի ստացուածքները։ Յիմարութիւն չի՞ համարւում «իրենից ցած դասակարգի» աղջկայ վերայ ամուսնանալը։ Արդեօք խելօք և գործնական չի՞ համարւում, երբ աղքատ ծնողները բռնի կերպով ստիպում են իրենց աղջկան առնառակութեան ժէջ կեանքն անցկացրած հարստին առնել։ Ինչպէ՞ս կը նայէին որ և է գործարանատիրոջ վրայ նրա նոյն կոչումն ունեցող ընկերները, եթէ նա իւր աղջիկը տար այն բանուորին, որին սիրում է իւր աղջիկը և որը սիրում է նրա աղջկան—նրան գժատուն ուղարկելու բան չէ՞ին համարի։ Եւ ընդհակառակը մի՞թէ նրան չէին քաջալերի բոլորն էլ, եթէ նա բռնի կերպով ստիպէր իւր աղջկան մարդու գնալ այն բուրժուային, որին չէր սիրում այդ աղջիկը, և որը—բուրժուան—միայն «հաշւով» էր ամուսնանում։ Բայց մի՞թէ սա պոռնկանոց չէ՞. կինն արդեօք վաճառքի առարկայ չէ՞ ներկայանում այստեղ։ Եւ լաւ ի նկատի ունեցէք, որ այսպիսի բաներ կատարւում են ոչ միայն հասարակութեան «բարձր խաւերի» մէջ – մենք տեսնում ենք ամուսնութեան պղծելը, սիրոյ պոռնկացումը հասարակութեան այն բոլոր խաւերի մէջ, ուր իշխում է մասոնայի պաշտամունքը։

Ի դէպ, ես յիշում եմ մի տեսարան «Թուցիկ թերթեր» զաւեշտական թերթից։ Նստած են երկու գիւղացիներ. մէկի տղան ցանկանում է ամուսնանալ միւսի աղջկայ վերայ։

«Իմ որդին ստացել է այսքան դեսիատին հող, այսքան եզ, այսքան կով, այսքան էլ ձի»։

«Ի՞նչ է ստանում քո աղջիկը»։

«Ես կարող եմ նրան միայն այսքան տալ»։

«Այդ շատ քիչ է. աւելացրու էլի մի զույգ եզ և կով»։

«Չեմ կարող»։

«Է՜հ, կը նշանակի այդ դէպքում մեր գործից ոչ-ինչ էլ չի դուրս գայ. հերիք է»։

Այս պատկերը վերցրած է կեանքից և ոչ մի Իւ-վենալ սրանից աւելի կծու ծաղր չէր կարող գրել։ Մենք պարծենում ենք մեր քաղաքակրթութեամբ և կարծում ենք, թէ վայրենիներից անհամեմատ բարձր ենք կանգ-նած, և այնուամենայնիւ մեզանում ծախում են աղջիկ-ներին եզներով և կովերով, ինչպէս Կաֆրները հարա-ւային Աֆրիկայում։ Եւ ինչո՞ւ այդպէս չլինի։ Մեր հա-սարակութիւնը հիմնուած է մարդու ստորացման վե-րայ, որին նա ապրանք է դարձրել. և այն, որ կինը պէտք է ծախէ իւր մարմինը, ներկայանում է որպէս մի մաս այն սիստեմի, որն ստիպում է բանուորին ծա-խել իւր աշխատանքն, այսինքն ծախել իրեն մարմնի և հոգու հետ միասին։ Բայց, ի հարկէ, այստեղ մի էական տարբերութիւն կայ. այն, ինչի համար որ ծա-խում է իրեն վարձու տարուկը, հասարակական անհրա-ժեշտ աշխատանքն է, որը միմիայն շնորհիւ այն հանգա-մանքների, որոնց մէջ կատարւում է, դառնում է անէծք բանուորների համար, այն ինչ, ինչի համար որ ծախում է իրեն պոռնիկ կինը, է ամենախայտառակ պղծումն սիրոյ և միևնոյն ժամանակ պղծումն մարդկային ընու-թեան։ Մէրը—օնորիուսն է. նա չի կարող իրեն ծախել։ Իսկ եթէ նա իրեն ծախում է, լինի դա ամուսնութեան

մէջ, թէ ամուսնութիւնից դուրս—նա պոռնկացումն է։ Մարդու և կնոջ մէջ եղած ամեն մի ընկերութիւն՝ որը տեղի է ունեցել սիրոյ միջոցով, եթէ նոյն իսկ օրհնուած չէ քահանայի ձեռքով—իսկական ճշմարիտ ամուս-նութիւն է։

Սակայն կինը ժամանակակից հասարակութեան մէջ ազատ չէ մարդկային ապրանքի միւս ձևից էլ։ Ար-դեօք ազատ կապիտալը, որի ախորժակը աւելի է բարձ-րանում, քանի զոհեր է կլանում, վարձու տարկութեան շղթաներով չէ՞ կաշկանդել նաև կնոջը, ինչպէս որ տղա-մարդին. և չէ՞ ձգել նրանց բանուորական բանտերը (бастилія), որոնք գործարան անունն են կրում։ Եւ դրանով չէ՞ խորտակել գործնականապէս—փաստօրէն (фактическій) բանուոր ժողովրդի «ընտանիքը»։ Բայց այս դեռ բոլորը չէ։ Կապիտալը իւր անկշտութեամբ երեխաներին նոյն իսկ քաշում—ձգում է իւր մարդակե-ութեան սեղանի վերայ։

Մարդ, կին, երեխաներ — բոլորն էլ վարձու տարուկներ են։ Ո՞ւր է արդեօք ընտանեկան «օջաղը», առանց որին անհասկանալի է ընտանեկան կեանքը։ Չնայած այս բոլորին՝ կապիտալը կուրծքը ծեծում է և աղօթում երկնքին, որ նա—երկինքը պաշտպանէ նրան չար սոցիալդեմոկրատներից, որոնք ցանկանում են ոչ-չացնել ընտանիքը։ Օ՜, դուք կեղծ բարեպաշտներ։

Բանուորն ընտանիք չունի. դուք գողացել էք նրա ընտանիքը։ Սակայն նա ցանկանում է ընտանիք ունե-նալ, որպէս զի մարդ դառնայ. և հէնց այդ պատճառով էլ նա սոցիալդեմոկրատ է։

Աշխատանքը մարդկութեան ամեն մի առաջադի-մութեան հիմքն է. միմիայն շնորհիւ աշխատանքի մար-դուն յաջողուեց բարձր կանգնել կենդանիներից, ազա-

տուել բնութեան սարկութիւնից։ Բայց ազատութեան միջոցը փոխուեց, ճնշման միջոց դարձաւ։ Փոխանակ աշխատանքի միջոցով ազատ դառնալու՝ բանուորը աշխատանքի սարուկը դարձաւ։ Հէնց այդ աշխատանքի սարկութիւնից է, որ պէտք է ազատուած լինի բանուորը։ Նա չպէտք է լինի կենդանի մեքենայ, որը մարդուն իր—առարկայ դարձնելով, ներկայանում է որպէս մեռած մեքենայից կախ ընկած մի մաս և կոչւում է ջուլհակ, հիւսն, մեքենայագործ։ Նա պէտք է մարդ լինի, որ ջուլհակութիւն, հիւսնութիւն է անում, մեքենաներ է շինում, որպէս զի կատարէ իւր հասարակական պարտականութիւնները։

Սակայն բանուորը, որ օրական 12, 14, 16 ժամ անց է կացնում արհեստանոցներում, գործարանում և որը յաճախ շատ հեռու է ապրում աշխատելու տեղից, ժամանակ չունի մարդ դառնալու։։ Տանջուած ու ջարդուած նա տուն է վերադառնում, պարկում է քնելու և հետևեալ առաւօտը՝ դեռ չհանգստացած նախորդ օրուան յոգնածութիւնից, նորից վազում է աշխատելու։ Սա մարդկային կեանք չէ, նոյն իսկ հազիւ կենդանական կեանք։ Ոչ մի զիւղացի չի համաձայնի այսպէս տանջել իւր ձիերին, իւր աշխատող տաւարին։ Բայց մարդն աւելի համբերատար է կենդանուց և բարեբախտաբար աւելի կենսունակ։ Եւ ահա հէնց նրանով, որ ժամանակակից հասարակութիւնը քայքայել է ընտանիքը, որ ստորացրել է կնոջը, աւելի դրանով քան իւր մեռցած յանցանքներով զրկել է իրեն ապագայում ապրելու իրաւունքից և ստորագրել է իւր մահուան դատավճիռը։ Այն հասարակութիւնը, որը պոռնկանոցը դարձրել է պաշտօնական հասարակական հիմնարկութիւն, իրաւունք չունի բարոյականութիւն բառն

արտասանել, որպէս զի չկարմրի, այդպիսի հասարակութիւնը դատապարտուած է և պէտք է կորչի ճընշուածների սրտում ապրող բարոյականութեան մարդկային զգացմունքի ալեկոծութեան տակ։

Կինը, որ աւելի քնքոյշ նեարդեր և քնքոյշ զգացմունքներ ունի, քան տղամարդը, աւելի խոր կերպով է զգում իւր ստորացումը, քան թէ տղամարդը։ Եւ հէնց այդ պատճառով էլ կինը մեծ ոգևորութեամբ է մասնակցում սոցիալիստական շարժման մէջ, որը նրան ազատութիւն և արժանապատուութիւն է խոստանում։ Դրա համար էլ հէնց կանայք, շատ ժամանակ չէ անցել, ինչ կոմմունայի հերոսական կռուի մէջ այնպիսի բարձր դիրք էին գրաւել։ Ջահիլ մայրերը ծծի երեխաները ձեռքներին յամառ կերպով կանգնել էին արագաձիգ հրացանների գնդակների տակ և քաջալերում էին իրենց մարդկանց։ Օրիորդները վրայ էին հասնում, վերցնում այն դրօշակները, որոնք ընկնում էին մեռնող բլուգաւորների (բլուզ հագած) ձեռքից և, առանց մահուան երկիւղի, տանում ուղիղ թշնամու հանդէպ, մինչև որ իրենք էլ ընկնում էին՝ հարուածուելով կարգ ու կանոնի հարբած զինուորների ձեռքով։ Հարիւրաւոր գերուած կանայք և օրիորդներ հպարտութեամբ և յամառութեամբ ընդունում էին մահացու վէրք և մեռնում էին «կեցցէ կոմմունան» գոռալով և արտայայտելով իրենց ատելութիւնը յաղթողներին։ «Զզուելի հրդեհաձիգներ», «հասարակաց կանայք—պոռնիկներ» «զզուանք յարուցանող ընկածներ» մռնչում էր միաձայն կերպո յետադէմ բուրժուազական մամուլը։ Դա ստոր մարդկանց մասնած, յիմարների սարքած մի խայտառակ հէքեաթ էր, բամբասանք, որն այժմ մխուած է մեր աւելի ազ-

նիւ հակառակորդների հէնց իրենց կողմից։ «Հասարակաց կանայք»։ Անկասկած նրանց մէջ կային դրանցից, բայց դա՝ «հասարակաց կանանց» ամենաանշան մասն էր նրանց մէջ։

Սակայն մի՞թէ կոմմունան նրանց դասձրեց այդպէս։ Ո՛չ, պարոն բուրժուաներ *), այդ ձեր հասարակութիւնն էր, ամենալաւ աշխարհը եղածներից, որ նրանց վրայ դրեց խայտառակութեան կնիքը՝ պղծելով-ապականելով նրանց։ Կոմմունան հնարաւորութիւն տուեց նրանց նորից բարձրանալու և ազատելու իրենց ձեր հասարակութեան ցեխից։ Եւ դուք դեռ զարմանում էլ էք, որ դէպի կոմմունան տածած նրանց բոցավառ ոգևորութիւնը, դէպի հին հասարակութիւնը տածած սարսափելի դեմոնական ատելութիւնը մղեց նրանց դէպի կռիւ. որ նրանք՝ այդ կէս-հրեշտակ, կէս-ֆուրիայ արարածները, ցանկանալով նրանց պատճառած անարդարութեան վրէժն առնել՝ դէպի մահ էին դիմում յանուն սուրբ գործի, որպէս զի դրանով քաւեն իրենց խայտառակ կեանքը։ Այո, այդ դէն ձգուած, կանացիութիւնը կորցրած արածների մէջ՝ «մշտական կանացիականը» գլուխ բարձրացրեց և խայթեց ձեր հասարակութիւնը։

Դուք ասում էք, որ քրիստոնեաներ էք. բայց արդեօք դուք մոռացել էք, թէ ինչպէս ձեր Քրիստոսն ամօթահար արեց այն կեղծաւոր բարեպաշտներին, որոնք քարկոծել էին ցանկանում մեղաւոր կնոջը։ Եւ դուք դեռ համարձակւում էք հայհոյել նրանց մեռնելուց յետոյ էլ, ձեր հասարակութեան այդ զոհերին, նոր վարդապետութեան այդ նահատակներին. վարդապետութեան, որն սարսուկներին ցոյց է տալիս իրենց ճորտութեան վախճանն, իսկ կնոջը՝ պոռնկանոցի վախճանը։

*) Այս տոնական ժողովում ներկայ էին նաև բաւականաչափ հակառակորդներ։

Դուք, բարեկամներ, լաւ հասկացաք, որ կանանց հարցը անքաքեալի կերպով կապուած է ընդհանուր սոցիալական հարցի հետ և որ մեզ համար առանձնապէս մեծ նշանակութիւն ունի կնոջը մեր շարժման մէջ քաշելը—ձգելը։ Գործարանական բանուորների և արհեստաւորների պրոֆէսիոնալ միութիւնն—ընկերութիւնը, որը բռնել է նաև Կրիմմիտշաուն, զանազանութիւն չի դնում տղամարդու և կնոջ աշխատանքի մէջ և այդ ձևով—փաստօրէն ընդունելով, որ երկու սեռերն էլ հաւասար իրաւունքների տէր են—աւելի շատ բան է արած կնոջ ազատութեան հարցի նկատմամբ, քան ինչ որ արել են մեր բոլոր «կանանց ընկերութիւնները» միասին վերցրած, թէև վերջիններս իրենց համարում են «կանանց հարցի» մի տեսակ կապալառուներ։

Կինը ներկայանում է որպէս անհրաժեշտ լրացուցիչը տղամարդու. առանց կնոջ տղամարդը չի կարող ժարդ լինել, առանց կնոջ մասնակցութեան նա չի կարող իրականացնել և մի իդէալ. և հէնց այդ պատճառով էլ մեր շարժման համար անհրաժեշտ է կնոջ օգնութիւնը։ Նրանց պարտականութիւնն ու շահերը պէտք որ ստիպեն նրանց կռուելու մեր շարքերում։ Կանայք ամենից աւելի են զգում ժամանակակից հասարակութեան ամբողջ սարսափը, հետևաբար ամենից աւելի էլ, ըստ ամենայն հաւանականութեան, կը հասկանան սոցիալական ազատագրութեան բոլոր օգուտները։ Ուստի և թող ոչ մի կին, ոչ մի ալջիկ յետ չը կանգնեցնէ իւր մարդուն, իւր սիրելուն այդ շարժու-

մից, ընդհակառակը թող բորբոքեն, ոգևորեն նրանց, ամրացնեն նրանց ուժերը, երբ նրանք կսկսեն թուլանալ։ Իրաքանչիւր մայր նմանապէս թող քարոզէ իւր որդիներին ազատութեան և հաւասարութեան աւետարանը, որպէս զի ամի մի սերունդ, որը մարդկային արժանիքի հպարտ գիտակցութեամբ հրաժարուի տէր և տրուկ ճանաչելուց։

Բարեկամներ, ինձ մնում է մի մեղադրանք էլ հերքել, որով կը վերջացնեմ ճառիս այդ մասը։ Ասում են, որ մենք ցանկանում ենք խորտակել բուրժուազիան և նրա աւերակների վրայ ստեղծել բանուոր դասակարգի իշխանութիւն։ Մեր ծրագիրը բացատրում է այս մեղադրանքը։ Ճիշտ է, որ մենք ցանկանում ենք խորտակել բուրժուազիայի իշխանութիւնը, բայց միմիայն այն նպատակով, որպէս զի խորտակենք ընդհանրապէս դասակարգերի ամեն մի իշխանութիւն։ Բուրժուազիան չափում է մեզ իր արշնով. նա դէն շպրտեց աւատական (ֆէօդալական) պետութիւնը, որպէս զի նրա տեղ առաջ բերէ բուրժուազական պետութիւն։ Նա մի դասակարգային իշխանութիւնը փոխարինեց միւսով։ Պրոլետարիատի նպատակն ուրիշ է, աւելի բարձր է։ Նա այնքան շատ է տանջուել դասակարգային իշխանութեան ճնշման տակ, որ չի կարող նրան—դասակարգային իշխանութեանը սկզբունքով թշնամի չլինել։ Սակայն որ դասակարգի վերայ կը ցանկանար իշխել պրոլետարիատը. չէ՞ որ նա «ամենացածր դասակարգին» է պատկանում, հետևապէս չունի մի դասակարգ, որի վերայ կարողանար իշխել և որին կարողանար շահագործել։ Մեր ձգտումն այն է, որ բոլորն էլ նոյնանման իրաւունքներ և պարտականութիւններ ունենան։ Ինչպէս որ հաւասարութիւնը

վերացրեց ցեղերի, ազգերի (վերջնիս վերաբերեալ եթէ ոչ քաղաքականապէս, գոնէ տնտեսապէս ու մասնաւորապէս) սահմանները, ճիշտ այդպէս էլ նա պէտք է վերացնէ դասերի ու դասակարգերի սահմանները, որպէս զի մարդկութիւնը հնարաւորութիւն ստանայ ազատ զարգանալու։ Այն ժամանակ էլ չեն լինի շահագործողներ ու շահագործուողներ. էլ չեն լինի տէրեր և տրուկներ. էլ չի լինի իշխանութիւն և տարկուութիւն։ Կարգ ու կանոն հաւասարութեան մէջ՝ փոխանակ անկարգութեան ենթարկման մէջ։

Ահա, թէ ինչ ենք ցանկանում մենք. և որ ազնիւ մարդը անարդարացի կը գտնէ մեր այս ցանկութիւնը։

Այսպիսով ես քննեցի մեր հասցէին ուղղած բոլոր գլխաւոր մեղադրանքները և ապացուցեցի նրանց անհիմն լինելը—դատարկութիւնը։ Ես ցոյց տուեցի, որ այս բաժանանքները—զրպարտութիւնները ներկայանում են որպէս հէնց իրեն—բուրժուազական հասարակութեան ծաղրանկարը (карикатура). այն հասարակութեան, որը իւր անմաքուր խղճի ազդեցութեան տակ՝ իւր զրգռուած երևակայութեան մառախուղի մէջ՝ իւր իսկ սեփական հրեշաւոր պատկերն է տեսնում։ Ես ցոյց տուեցի, որ այն, ինչի մէջ որ մեղադրում են մեզ հին հասարակութեանը ներբող կարդացողներն ու այդ հասարակութեան ներկայացուցիչները, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն այդ հին հասարակութեան մեղքերն, արատները ու յանցանքները։ Ես ցոյց տուեցի, որ «բաժանումը», «բաղմակնութիւնը» սիստեմատիկ կերպով գործադրւում է միմիայն հին հասարակութեան մէջ։ Ես ցոյց տուեցի, որ հէնց հին հասարակութիւնն ինքն է, որ ոչնչացնում է սեփականութիւնը, խորտակում է ընտանիքը, զրկում է ժողովրդին քաղաքակրթութեան

օրհնութիւնից, ի չարն է գործ դնում լուսաւորութիւնը —քաղաքակրթութիւնը և վնասում նրան։ Ես ցոյց տուեցի, որ մենք, սոցիալդեմոկրատներս, բուրժուազիայի վերաբերմամբ՝ ներկայանում ենք որպէս առաջապահ մարտիկները յանուն սեփականութեան, ընտանիքի, քաղաքակրթութեան. մարտիկներ՝ ընդդէմ «բաժանման» «բաղմակնութեան»։ Ես ցոյց տուեցի, որ հէնց մենք ենք, որ ցանկանում ենք առաջ բերել աշխարհում երկպառակութիւն և անկարգութիւն—ներդաշնակութիւն և կարգ։ Մի խօսքով՝ ես ցոյց տուեցի, որ մեր հակառակորդների բոլոր մեղադրանքներն էլ մենք կարող ենք յետ շպրտել իրենց երեսին։ Մենք կուում ենք ոչ թէ սեփականութեան դէմ, այլ յանուն սեփականութեան, ոչ թէ ընտանիքի դէմ, այլ յանուն ընտանիքի, ոչ թէ քաղաքակրթութեան դէմ, այլ յանուն քաղաքակրթութեան, ոչ թէ կարգ ու կանոնի դէմ, այլ յանուն կարգ ու կանոնի, ոչ թէ ներդաշնակութեան դէմ, այլ յանուն ներդաշնակութեան։

Ես ցոյց տուեցի, որ բանուորական շարժումը մի քաղաքակրթական շարժում է, որը իւր ծագմամբ պարտական է ոչ թէ պատահականութեան, խաղի կամ կամայականութեան, այլ բնական անհրաժեշտութեան և հէնց բնութեան բնական անհրաժեշտութեամբ էլ պէտք է, որ յաղթի։ Ես ցոյց տուեցի, որ միմիայն տնտեսութիւնը և տգիտութիւնը կարող են կասկածել սոցիալդեմոկրատական շարժման իրաւացի—արդարացի լինելու մասին և որ ամեն մի աշխատանք, ճիգ ու ջանք այդ շարժումը կանգնեցնելու համար նոյնքան անյուսալի և անժիտ է, որքան եղի ճիգն ու ջանքը ոլորող շոգեղնացը (ЛОКОМОТИВЪ) կանգնեցնելու համար։ Ինչպէս որ շոգեղնացն առաջ կը սլանայ այն

բոլոր արգելքների վերայով, որոնք կը հանդիպեն նրա ճանապարհի վերայ։

Եւ այս բանը պէտք է հասկացած լինէին մեր հակառակորդները. նրանք պէտք է որ հասկացած լինէին, թէ իրենց շաների պատճառով հէնց պէտք է խուսափեն ամեն մի պատահարից—կատաստրոֆից։ Ժամանակակից աշխարհը հանգստանալ չի կարող։ Շահերն ընդհարում են միմիանց, որի հետեանքը լինում է դասակարգերի կռիւը և պատերազմ։ Մի թէ այսպիսի պայմանները արժանի են այն աշխատանքին, ջանքին, որը գործ է դրւում սրանց—այս պայմանները պահելու համար։ Մեր հակառակորդներին կարելի է երկու դասի - կատեգորիայի բաժանել. մի դասը կրում է մեր դէմ իւր տգիտութեան պատճառով, իսկ երկրորդ դասը՝ չարամտութեամբ։ Առաջիններին ես կ'ասեմ.

Ծանօթացէք մեր շարժման հետ։ Դուք կը դադարէք վախենալ նրանից, երբ կը ճանաչէք նրան։ Վախն—ամենավատ խորհրդատուն է։ Այն կարմիր տեսիլը, որը սարսափեցնում է ձեզ, բոլոր այլ տեսիլների նման անդիտութեան արդիւնք է և չքանում է խելքի փորձող աչքի առաջ։ Տնտեսական պայմանների գիտութիւնը—ծանօթութիւնը մի կողմն է քշում ոչ միայն վախն, այլ նաև մոլեռանդութիւնը։ Գիտութիւնը մոլեռանդութիւն չգիտէ։ Գիտութիւնը կրքերի չի դիմում, նա ժխտում—բացատրում է նրանց, նա ուսումնասիրում է։ Նա գիտէ, որ բոլոր երևոյթներն էլ ունին իրենց հիմնաւոր պատճառները. նա աշխատում է հետազօտել այդ պատճառները, բայց երբէք վիճել երևոյթների հետ։ Թող ինձ ցոյց տան որ և է անցած քաղաքակրթական շարժում, որը յաջողեցրած լինին

կանգնեցնել և որը վերջ ի վերջոյ յաղթած չլինի հակառակորդներին։ Ինչու՞ համար են այդ հաղարաւոր անյաջողութիւնները նորից մեր վերաբերմամբ գործադրում։ Արդեօք ժամանակակից սերունդը իւր գիտութիւնը պատմութիւնից չէ՞ ձեռք բերել։ Մի՞թէ մենք պէտք է ամեն մի վաղուց ձեռք բերած փորձ՝ նորից ինքներս մեզ վերայ կրենք։ Այդ դէպքում պէտք է որ սուտ լինէր ամեն մի գիտութիւն, ամեն մի ժարդկային առաջադիմութիւն։

Մի անգլիայի պետական ժարդ մի անգամ ասաց, որ կուսակցութիւնների պատմութիւնը—փոխադարձ դիջումներ (կոմպրոմիս) պատմութիւն է։ Մինչև որոշ կէտ՝ այդ բոլորովին ճիշտ է։ Ափսոս միայն, որ իշխող կուսակցութիւնները վճռում են կոպրոմիսսի դիմել մեծ մասամբ միմիայն այն ժամանակ, երբ ընդդիմութեան բոլոր միջոցներն էլ սպառուած են լինում և այնքան կորցրած են լինում իրենց ուժը, որ կոմպրոմիսսը կատարեալ սնանկութիւն է նշանակում - ցոյց տալիս։

Եթէ իշխող կուսակցութիւնը նրբամիտ-սրամիտ և խելօք է, կոմպրոմիսսի կը դիմէ ամեն անգամ, հէնց որ ժողովրդական յարձակողական շարժման հանդիպէ։

Միմիայն այդպիսի կոմպրոմիսսներով—ճիշտ հասկացէք այդ խօսքի նշանակութիւնը. կոմպրոմիս նշանակում է՝ այնպիսի մի գրութիւն, երբ փոխանակ սուր կերպով հաշիւները վերջացնելու անցեալի հետ, կուսակցութիւնների համաձայնութեամբ ստեղծւում է մի անցողական գրութիւն—այսպէս, միմիայն մի շարք այդպիսի կոմպրոմիսսներով, հետևաբար բարենորոգումների միջոցով կարելի է սոցիալական շարժման խաղաղ ելքն ապահովել և հին աշխարհից—նոր աշ-

խարհ մի անցումն ստեղծել՝ խնայելով, որքան կարելի է, ներկայումս իշխող դասակարգերի շահերը։

Հէնց այդ պատճառով էլ այդպիսի կոմպրոմիսսը աւելի մեծ նշանակութիւն ունի ներկայումս տիրող դասակարգերի շահերի համար, քան մեր շահերի, քանի որ մենք առանց կոմպրոմիսսի էլ կը հասնենք մեր նպատակին, ամենայն հաւանականութեամբ նոյն իսկ աւելի շուտ։ Մենք դեռ կարող ենք կոմպրոմիսսի դիմել՝ ի նկատի ունենալով ժարդասիրական զգացմունքն. այն ինչ մեր հակառակորդները կարող են դիմել այդ բանին միմիայն սնձնական շահերից դրդուած։ Ցանկանում ենք մենք արդեօք կոմպրոմիսս անել, թէ ոչ, այդ այնքան էլ նշանակութիւն չունի ի միջի այլոց, իսկ թէ գլուխ կը գայ այդ բանը, թէ ոչ, բացառապէս կախուած է մեր հակառակորդներից։ Եթէ բուրժուազիան կը ցանկանայ կոմպրոմիսսի դիմել, այն ժամանակ այդ կոմպրոմիսսը գլուխ կը գայ՝ անկախ այն բանից, թէ մենք ցանկանում ենք այդ բանը, թէ ոչ։ Բուրժուազիան է կառավարում ուղղակի կամ պետութեան միջոցով զօրքը, կապիտալը, ժաժուլը. մի խօսքով՝ իշխանութեան բոլոր նիւթական և ժառաւոր միջոցները։ Հետևաբար նրա ձեռքին է—նրանից է կախուած վերջ դնել—լուծել սոցիալական խնդիրը կոմպրոմիսսի և բարենորոգումների ճանապարհով։ Նրան մնում է միմիայն ցանկանալ։ Բայց որպէս-զի ցանկանայ, պէտք է նախ հասկանայ, որ ներկայ պայմանները հիմնուած են անարդարութեան վերայ և անհիմն են։ Հէնց այդ պատճառով էլ ես դարձեալ ասում եմ մեր ազնիւ հակառակորդներին. ուսումնասիրեցէք սոցիալական խնդիրը։ Հասկանալ սոցիալական խնդիրը—նշանակում է լուծել այդ խնդիրը։ Սֆինքսի հանելուկը

մարդն էր. մարդն է ներկայանում նաև սոցիալական խնդրի հանելուկը։ Մինչև որ մարդու մասին եղած հանելուկը չլուծուի, աշխարհը չի խաղաղուի և սոցիալական խնդրի սֆինքսը կը շարունակի ցոյց տալ հասարակութեանը նրա սարսափեցուցիչ տեղը և ձգել նրան մի սարսափից միւսի մէջ։

Մի՞թէ հին և նոր աշխարհների մէջ եղած խորխորատը պէտք է լցուի դիակներով։ Չէ՞ որ տափաստանների հրդեհը, որից ժամանակակից հասարակութիւնն աշխատում է ազատուել, զոյութիւն ունի միմիայն հասարակութեան երևակայութեան մէջ և միմիայն երկիւղի ազդեցութեան տակ կարող է իրականութեան փոխուել։ Մի՞թէ անհնարին է մի այնպիսի կամուրջ շինել, որը հաւատարիմ կերպով անցկացնի մեզ նոր աշխարհը։

Մենք անկարող ենք այդ բանն անել։ Մեր հակառակորդները կարող են այդ բանն անել, և եթէ նրանք անեն այդ, մարդկութեանը յաւիտենական ծառայութիւն արած կը լինեն։

Ես վերջացնում եմ։ Մեր անելիքը մեզ համար շատ պարզ է։ Մենք առաջ ենք գնում այն ճանապարհով, որը ցոյց է տալիս մեզ մեր պարտականութիւնը։ Յիշիր՛ Noblesse oblige *) նշանաբանը՝ մենք երբէք չենք մոռանայ, որ մեր գործը մարդկութեան գործն է։ Ինչ լուծումն էլ որ տրուի, մենք ընդունում ենք։ Մենք ազատ ենք անձնական առելութիւնից։ Նոյն իսկ մեր թշնամու մէջ մենք յարգում ենք նրա մարդը։

Իսկ ձեզ, բարեկամներ, ես յանկանում եմ յիշեցնել. շարունակեցէք հանգստութեամբ և անդուլ կերպով աշխատել ձեր ընկերութեան մէջ, մի յոգնէք ձեր գործունէութեան մէջ, տարածեցէք մեր գաղափարները—և եթէ երբ և իցէ կ'զգաք, որ թուլանում էք, յիշեցէք ազնիւ Եակոբին, որը երբէք չէր տատանուում, երբ նոյն իսկ նրա չորս կողմում ամեն ինչ տատանման մէջ էր. յիշեցէք նրա խօսքերը։ «Ամենասակաւաթիւ բանուորական ընկերութեան կազմակերպութիւնը, քաղաքակրթութեան ապագայ պատմաբանի համար աւելի մեծ գին կ'ունենայ, քան թէ Սադովայի մօտ տեղի ունեցած կռուի օրը»։

*) Ազնուութիւնը պարտադրում է—ազնիւ գործը բարձր պարտականութիւններ է դնում մարդու վերայ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, ՄԱՍՆԻԿՅԱՆ
ՍՊԱՍ. ԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Լույս տեսաւ «ԿԵԱՆՔ»-ի Գրադարանից.

1. ՎՈՂՈՎՈՉՈՎ.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմտքում. Թարգ. Կ. Միքայելեանցի. գինը՝ 10 կ.

[redacted]

3. ԿԱՈՒՑԿԻ.—Աւստրիայի ճգնաժամը (Լեզու և ազգ). Թարգմ. Ա. Ս. Յաւելուած՝ օտար խօսքերի բառաթերթ. գինը՝ 7 կ.

4. ՋԷՅԴԷԼ.—Նորմալ բանւորական օր. Թարգ. Մ. Եսայեանի. գինը՝ 5 կ.

5. Ի. ՇՏԷՐՆ.—Մարքսի յաւելեալ արժէքի թէորիան. Թարգ. ռուս. Ս. Ղ. գինը՝ 5 կ.

6. Վ. ԼԻԲԿՆԵԽՏ.—Երկու աշխարհ. Թարգմ. Ռուս. Հ. Յով. գինը՝ 15 կ.

7. Կ. ԱՅՍՆԷՐ.—Յապթական ժայիսը. Թարգմ. Մ. Սարուխան. գինը՝ 2 կ.

Կ. ՄԱՐՔՍ ԵՒ Ֆ. ԷՆԳԵԼՍ.—Կոմունիստական մանիֆեստը։

Տպագրութեան են յանձնուում և շուտով լոյս կտեսնեն.

[redacted]

2. ԲԵԲԵԼ.—Պրոֆեսիոնալ միութիւններ։

3. ԼԻԲԿՆԵԽՏ.—Մեր նպատակները։

Թարգմանուած և տպագրութեան համար պատրաստուում են.

1. ԿԱՈՒՑԿԻ.—Էրֆուրտի ծրագիրը։

2. ԳԵԴ.—Կոլեկտիվիզմ։

3. Կ. ԿԱՈՒՑԿԻ.—Դասակարգային շահերը։

Դիմել՝ Թիֆլ. «ԿԵԱՆՔ»-ի խմբագրատունը («Редакція КЯНКЪ»), «Կենտրոնական», «Գուտտենբերգ» և Թառայեան գրավաճառանոցներին, իսկ միւս քաղաքներում տեղական գրավաճառանոցներին։

«Ազգային գրադարան»
NL0210242